

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեան ճախակրթարանի եւ Բաստրմաճեան երկրորդականի 2016-2017 շրջանաւարտից հանդէսները



(Լուսանկարները Արմէն Ալեմեանի)

Կարդալ էջ 6-7

Հայաստանի Ռազմական Օդուժը 25 Տարեկան է



Կարդալ էջ 4

2017

CR-V

STARTING FROM

\$26,890*

Image for illustration purposes only.

*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.

HONDA

GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com
◀ OPEN SATURDAYS ▶

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobasarian

**HONDA**



MARCHÉ ADONIS

Un univers de fraîcheur



Donnez une touche
méditerranéenne
à vos BBQ en famille !

*Give a mediterranean touch
to your BBQ with the family!*

www.groupeadonis.ca

Suivez-nous



VILLAGE GREC

CONNU POUR LE MEILLEUR SOUVLAKI ET GYRO EN VILLE !



KNOWN FOR THE
BEST SOUVLAKI
& GYRO IN TOWN!



4491, boul. Samson, Chomedey, Laval • Tel: 450 681-3333

Dim. à mer. : 11h à 11h Sun. - Wed. 11am - 11pm
Jeudi à sam. : 11h à minuit Thurs. - Sat. 11am - midnight

Հայէպի Ու Թալիշի Թիկունքին

Մեր մամուլէն, նաեւ անձնական հաղորդակցութիւններու ճամբով, հետզ-հետէ աւելի յաճախ կը լսենք.

Հայէպի ապահովութեան վիճակը զգալի բարելաւում կրած է: Զուրի սպասարկումը բաւական կանոնաւորուած է, ելեկտրաբաշխումի ժամերը աւելցած են, աշխատանքի պայմաններ կը վերստեղծուին դանդաղ քայլերով:

Հայէպի մէջ Մայիս 28ի փառաւոր տօնակատարութիւն տեղի ունեցած է:

Հայէպի ուսումնական տարեշրջանը աւարտին կը հասնի, հանդէս... յառաջիկայ տարուան համար արձանագրութիւններ:

Տակաւին՝ մշակութային ձեռնարկներ, դասախօսութիւն... եւ մասամբ նորին:

Տարուան առաջին օրերուն անհաւատալի ու հեռաւոր երազ թուացող՝ բարեշրջում ցոյց տուող իրականութիւններ սկսած են իրենց բարի հովանոցը տարածելու ժողովուրդի կեանքին վրայ, մինչեւ իսկ քաջալեր հանդիսանալով, որ տուն-տեղ-գործ հարկադրաբար լքած մարդիկ մտածեն վերադարձի եւ վերականգնումի ձեռնարկելու մասին:

Քանդուածին ու քայքայուածին վերականգնումը սկսած է արդէն:

Եւ ինչպէս որ պատերազմական վիճակի ստեղծման առաջին փուլին, 5-6 տարի առաջ, անհաւատալի եւ աներեւակայելի կը թուէր, թէ տաքնապը կրնայ տարիներ տեւել, այսքա՛ն սուգ ու աւեր պատճառել, հիմա, մարդիկ արդար զգուշաւորութեամբ կը դիտեն բարեշրջման ընթացքը, թերահաւատութեամբ հարց կու տան, թէ պատերազմը կրնա՞յ օր մըն ալ վերջ գտնել, կամ՝ արդէն վերջ գտա՞ծ է:

Բայց չէ՞ որ ամէն սկիզբ վերջ մը կ'ունենայ:

Սուրիան ու անոր հետ մեր համայնքը ահաւոր դին վճարեցին երկրին պարտադրուած, ներամուծուած՝ պատերազմին. վճարումը հոս-հոն կը շարունակուի տակաւին, մինչեւ իսկ եթէ Հայէպի եւ պատերազմի դաշտ եղած կարգ մը շրջաններու վիճակը որոշ բարեշրջում արձանագրած է: Բազմամիլիոն անմեղ քաղաքացիներ իրողապէս բռնադադլի ենթարկուեցան, պիտակումներու խաղալիք դարձան, հակառակ անոր, որ իրենց

կեանքէն, ստացուածքէն ու ճակտի քրտինքով շահուած վաստակէն շատ բան կորսնցուցին: «Տաէշ» կոչուած թրքատիպ ոճրախումբը չխնայեց քրիստոնեային, իսլամին եւ այլ փոքրամասնութիւններու, այս բոլորը՝ «Իսլամ»ի անունով, ծառայեց միայն ու միայն վարկաբեկելու իսլամը:

Հիմա, հորիզոնը սկսած է դանդաղօրէն լուսաւորուելու. թէեւ մտահոգիչ վիճակը բոլորովին չէ փարատած, ո՛չ ալ ամբողջական խաղաղութիւնն ու բարեկեցութեան ուղին պիտի հաստատուին մոգական գաւազանի մը շարժումով:

Հայէպի հայութիւնը, ինչպէս նշեցինք, բոլորին նման սուղ վճարեց պատերազմական տարիներուն: Տոկաց, մնաց պատնէշի վրայ, նօսրացում ապրեցաւ, բայց տոկաց: Առաւելաբար վստահեցաւ իր կարողութիւններուն, սակայն մի՛շտ ալ զգաց, որ հայրենիքն ու Սփիւռքի հայութիւնը ըստ կարելոյն իր թիկունքին են կանգնած:

Խաղաղութեան ու վերականգնումի երթը նո՛յնքան դժուար պիտի ըլլայ, սակայն ահաւորը, կը յուսանք, որ արդէն անցեալին կը պատկանի: Սեփական բնակարան, գործատեղի եւ համայնքային հաստատութիւններ վերականգնելը կը կարօտի երկարաշունչ մագլցումի, որուն համար հիմնական նախապայմանը խաղաղութիւնն է: Մեկնողներէն ոմանք պիտի չվերադառնան, որովհետեւ հարկադրաբար հաստատուած են տարբեր երկիրներու մէջ, նաեւ Հայաստան. սա-

կայն պիտի ըլլան վերադարձողներ, որոնք իրենց ձեռքերը պիտի միացնեն տոկացողներուն եւ, պատերազմի տարիներո՛ւն իսկ կենսունակութենէ չհրաժարող մեր գաղութին պիտի ապահովեն վերականգնութեան յենարաններ: Թրքական պատուհասին ենթարկուած Քեսապը նախատիպն էր ըլլալիքին:

2010ի Հայէպը կրնայ անդարձ մեկնած ըլլալ, սակայն նորին համար բաւարար հիմքեր կան ու պիտի ապահովուին անկասկած:

Արցախէն ու Հայաստանէն ժպիտ բաշխող լուրեր կը հասնին նաեւ սահմանային գօտիին մասին: Թալիշը սկսած է վերաբնակեցուելու, 2016ի Ապրիլի յարձակման հետքերը կը դարմանուին, գաղթողները կը վերադառնան

Հոս ալ՝ սեփականին կառչելու նո՛յն յանձնառութիւնը, աննահանջ կամքը: Հո՛ս ալ՝ ոգի մը, զոր դարերու խորերէն ժառանգ հասած է մեզի եւ կը կոչուի Հայու Հոգի:

Հայէպն ու Թալիշը, նաեւ թշնամական յարձակումներու ենթակայ բոլոր շրջանները իրենց անոխարինելի տեղն ունին մէն մի հայու հոգիին ու կեանքին մէջ, մտածումի՛ն մէջ:

Այսօր ու վա՛ղն ալ տառապեալներն ու վերականգնողները պիտի զգան, պէտք է զգան, որ ամբողջ հայութիւնը կը շարունակէ կանգնել իրենց թիկունքին:

Ս. ՄԱՀՍԵՐԷՃԵԱՆ

Հայաստանի Ռազմական Օդուծը 25 Տարեկան Է

ԵՐԵՒԱՆ.– Հայաստանի Հանրապետութեան Զինուած ուժերու ուղղաթիւներն ու օդանաւերը Յունիս 26ին թռիչքներ կատարեցին՝ երկնակամարին վրայ ցուցադրելով բարձրագոյն սաւառնորդութեան հնարքներ ու այլ հմտութիւններ:

Հայաստանի Զինուած ուժերու օդուծը, Հակաօդային պաշտպանութեան զօրքերու ու ռադիո-ելեկտրոնային պայքարի ստորաբաժանումներու կազմաւորման 25ամեակին առթիւ, Երեւանի «Էրեբունի» օդակայանին մէջ օդաչուներն ու անկարգելորդները օդին մէջ պատկերեցին Հայոց եռագոյնը:

Հայաստանի պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան, ջերմօրէն շնորհաւորելով նշուած ուժերու տօնը՝ ըսաւ, որ սեփական գինուծ եւ ռազմական աւանդույթներ ունեցող աշխարհի բոլոր ժողովուրդներուն համար ռազմական օդուծը հպարտութեան եւ ոգեւորութեան աղբիւր է, ինչպէս նաեւ սեփական երկրի պաշտպանութեան, երկրի մարտունակութեան եւ հզօրութեան խորհրդանշ:

Անոր խօսքով՝ հայկական ռազմական օդուծի տարեդարձը մեր գինուորական տօնացոյցին մէջ առանձնայատուկ եւ պատուաւոր տեղ կը զբաւէ: «Սա իւրատեսակ տօն է, որ առիթ է յետադարձ հայեացք նետելու, վերագնահատելու պատերազմի դժուար օրերուն ստեղծուած, հայկական օդուծի անցած ճանապարհը, արժեւորելու ունեցած ձեռքբերումները եւ սահմանելու նոր նշանող՝ առաւել նշանակալի ձեռքբերումներու հասնելու համար: Այս տօնը նաեւ մեր ամբողջ հասարակութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ այն մարդոց վրայ, որոնց ամէնօրեայ քրտնաջան աշխատանքին շնորհիւ կազմաւորուած է հայկական օդուծը», ըսած է Սարգսեան՝ մաղթելով խաղաղ երկինք, անսպառ եռանդ եւ շարունակական ձեռքբերումներ:



Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱՒԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

 HAIG AFARIAN Cell : 514.862-6779 Bur : 514.360.3000 ext 1234 haig.afarian@gmail.com effectuée par MALES ARCHITECTES-HYPOTHECAIRES Charisma FINANCE 3310 100e Avenue, bureau 350, Laval Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718	Groupe Sutton - Performer Inc. 123 Place Frontenac Pointe-Claire, QC H9R 4Z7  ALBERT ARKILANIAN Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596	 VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS  GABRIEL Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca 7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4 Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967 www.nissangabriel.com • www.hondagabriel.com
École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan  NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tel: (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7 Services available in Armenian, Arabic, English and French	BRING YOUR OWN WINE NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON  MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.	 ՀԱՅԿ ԽԱՐԺՈՒՆԻԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000	 NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTREAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Արցախ. Պատերա՞զմ ԹԷ՞ Խաղաղութիւն

Արդէն ահա 23 տարի է, ինչ այս հարցը կարծես թէ դամոկլեան սրի պէս կախուած լինի Ատրպէյճանա–արցախ–եան հակամարտութեան գօտու վրայ։ Քանզի 1994թ. մայիսեան հրադադարի պարգեւած այն պատրանքը, թէ տիրող՝ թէկուզ եւ յարաբերական, փխրուն խա–ղաղութիւնը եթէ ոչ հաստատուեն, ապա, այնուամենայնիւ, որոշակի երաշխիք է պարունակում վերջնական ու տե–ւական խաղաղութեան հաստատման համար, իրականում ցնդում է օրէցօր՝ մշտական սպառնալիքի տեսքով վտան–գելով միջազգային հեղինակաւոր կա–ռոյցի՝ ԵԱՀԿ Մինսքի խմբի, ապա եւ նրա համանախագահութեան հովանու ներքոյ աւելի քան քառորդ դար գոր–ծադրուող բանակցային ջանքերը։

Երեւոյթի հերթական ապացոյցն օրերս չփման գծում Արցախի Պաշտպա–նութեան բանակի չորս զինծառայողի սպանութիւնն է, որ իրականացրել է Ատրպէյճանական զինուժը՝ այս էլ, որ հազարերորդ անգամ խախտելով։ Իսկ որ դա իրօք սպանութիւն էր, կարծում եմ, չի կարող որեւէ կասկած յարուցել։ Քան–զի հայ զինուորների մահը երկկողմ մար–տական գործողութեան հետեւանք չէր, այլ՝ միակողմանի դիտաւորեալ, նպա–տակային գնդակոծութեան հետեւանք, հետեւապէս եւ ենթակից քրէական պա–տասխանատուութեան։

Թէ այդ պատասխանատուութիւնը որոշակիօրէն ի՞նչ իրաւական կառոյցի կողմից կ'իրականացուի, ցաւօք, առայժմ պատասխանի չյանգող ենթադրեալ կամ, այլ կերպ՝ ընդամէնը հռետորական հարց է։ Ահա Հայաստանի քննչական կոմիտէն այդ կապակցութեամբ հաղորդում է, որ առաջին եւ երկրորդ կայազօրային քննչական բաժիններում քրէական գոր–ծեր են յարուցուել՝ Ատրպէյճանի զինու–ժի կողմից ազգային եւ կրօնական ատե–լութեան, մոլեռանդութեան շարժառի–թով, շատերի կեանքի համար վտանգա–ւոր եղանակով սպանութիւններ կատա–րելու դէպքերի առթիւ։ Եւ ի՞նչ։ Ձէ՞ որ դրանք առաջին քրէական գործերը չեն, որ հայկական կողմը յարուցում է Ատր–պէյճանի նման համարժէք պահուածքի կապակցութեամբ։ Ոչ պաշտօնական, հե–տեւապէս ենթադրելի ու մօտաւոր տու–եալներով, որոնք այս տարուայ փետր–ուարի

21–ին հրապարակել է Հայկական ուսումնասիրութիւնների «Անի» կեդրո–նը, 1994թ. մայիսեան հրազադարից յե–տոյ անցած ժամանակաշրջանում Հա–յաստան–Ատրպէյճան պետական սահ–մանի եւ Արցախ–Ատրպէյճան չփման գծում Ատրպէյճանական զինուժի իրա–կանացրած գնդակոծութիւնների պատ–ճառով հայկական կողմի կորուստների թիւը՝ մարտականը եւ ոչ մարտականը միասին, կազմում է 2 հազար հոգի։ Հե–տեւապէս, բացառելով մարտերի ընթաց–քում մեր ունեցած զոհերի հանգաման–քը, կարելի է պատկերացնել, թէ քանի քրէական գործ է յարուցուել առ այսօր։

Արդեօք այդ գործերի առնչու–թեամբ դատական պատասխանատուու–թեան ենթարկուե՞լ է թէկուզ մէկ Ատր–պէյճանցի մարդասպան։ Միանշանակ՝ ոչ։ Մինչդեռ հակառակն ապացուցող տեղեկատուութիւն՝ ինչքան ուզես, երբ Ատրպէյճանի իշխանութիւնները, ան–ձամբ երկրի նախագահ կոչեցեալ Իլհամ Ալիեւը, իւրաքանչիւր հայի սպանու–թեան համար ամենայն կերպ խրախու–սում, քաջալերում են նոյն այդ մար–դասպաններին։ Յիշենք թէկուզ անցեալ տարուայ ապրիլեան կարճատեւ պատե–րազմի ժամանակ հայ զինուորների գլխատման կամ ալանդակման բարբա–րոսական դէպքերը, երբ բացէիբաց, հանրօրէն տեսանելի պայմաններում

ցուցադրւում էին դրանք, իսկ ոճրա–գործները՝ պարգեւատրւում։

Այդ դէպքում՝ ինչպէ՞ս, անի–մա՞ստ համարենք այդ սպանութիւնների կապակցութեամբ քրէական գործերի յա–րուցման գործնական դրուածքը։ Ի հարկէ, դարձեալ ոչ։ Վստահաբար կարե–լի է ենթադրել, որ այդ քրէական գոր–ծերն ուղարկւում են միջազգային դա–տական ատեաններ՝ ի պահանջ իրաւա–կան պատասխանատուութեան ենթարկե–լու ոճիրը կազմակերպած, հրահանգած, քաջալերած ու գործած կողմին՝ Ատր–պէյճանի իշխանութիւններին։ Բայց, արդեօք, նոյն այդ միջազգային դատա–կան ատեանները երբեւէ արձագանգե՞լ են հայկական կողմի փաստարկուած վկայութիւններին ու դրանցից բխող պահանջներին։ Բնականաբար՝ երբեք։ Անձամբ ես չեմ յիշում նման դէպք։ Ուստի կարելի է գալ հետեւեալ եզրա–յանգումներին։ Նախ՝ աշխարհի հակա–մարտային գօտիներում այնքան շատ ու շատ են մարդկային կեանքի նկատմամբ իրականացուող մահացու ոտնձգութիւն–ները, որ հերթը ոչ մի կերպ հայերիս չի հասնում։ Ապա նոյն այդ ատեաններին ամենեւին չեն յուզում ու մտահոգում այդ սպանութիւնները։ Եւ վերջապէս, մատների արանքով նայելով Ատրպէյ–ճանի խժոժութիւններին ու որդեգրած լինելով նման կողմնակալ պահուածք, այդ ատեանները հաստատում ու վերա–հաստատում են հայ հանրութեան, ան–ձամբ իմ կասկածները, որ իրենք նոյն–պէս կամա–ակամայ մեղսակից են Պաք–ուի այդ յանցանքներին։ Այնուամենայ–նիւ, փորձը, ինչպէս ասում են, փորձանք չէ, համբերատար յամառութեամբ ու վճռակամութեամբ շարունակենք բախել այդ ատեանների դռները՝ չբացառելով, որ, այնուամենայնիւ, վաղ թէ ուշ կը գայ աշունը, ինչպէս ասում են՝ ճտերը հաշուելու ժամանակը։

Բայց մինչ ցանկալի աշունը կը գայ, այսօր իսկ շարունակում է օրախն–դիր մնալ պատերազմի ու խաղաղու–թեան երկուութեան հարցը։ Ի՞նչ է կա–տարւում եւ ո՞րն է պատճառը։ Փորձենք պարզել։

Նախ, որպէս անառարկելի իրողու–թիւն ընդունենք, որ Ատրպէյճանա–ար–ցախեան հակամարտութեան պատճառա–հետեւանքային առանցքը հակամարտ կողմերի՝ Պաքուի եւ Ստեփանակերտի, իրերամերժ, հակադիր սկզբունքային դիրքորոշումներն են։ Պաքուն անտեսե–լով հիմնախնդրի պատմաքաղաքական եւ իրաւաքաղաքական հիմքերը յամա–ռօրէն պնդում է, թէ Լեռնային Ղարա–բաղը եղել ու մնում է Ատրպէյճանի տարածքի անքակտելի մասը, հետեւապէս պէտք է գտնուի բացառապէս իր իրաւա– ենթակայութեան տիրոյթում։ «Մենք թոյլ չենք տալ, որպէսզի Ատրպէյճանի պատմական տարածքում ստեղծուի երկ–րորդ հայկական պետութիւնը», քանիցս ճռումաբանել է Ատրպէյճանում խա–ղատների եւ հերոյինի թիւ մէկ երկրպա–գո՞ւ ասեմ, թէ՞ ցաւագար, այնուամե–նայնիւ՝ այդ երկրի եռակի անգամ նա–խագահ յորջորջուած Իլհամ Ալիեւը։ Առաջին հայկական հանրապետութիւնը, ինչպէս կռահեցիք, Հայաստանի Հանրա–պետութիւնն է, որի տարածքը Պաքուն նոյնպէս Ատրպէյճանի պատմական հող է համարում։ Է՛հ, գիւմրեցու յանգով ասած՝ ծօ՛, խեղժին աչէք։

Իր հերթին՝ Ստեփանակերտը, յե–ուելով վերոյիշեալ հիմունքների վրայ, համոզիչ փաստարկներով ապացուցում է, որ Արցախը երբեք չի եղել անկախ Ատր–պէյճանի կազմում՝ թէ՛ 1918–20թթ. եւ թէ՛ 1991–ի օգոստոսի 30–ից ի վեր, երբ հռչակուեց ներկայիս Ատրպէյճանի Հանրապետութիւնը՝ ներկայանալով որ–

պէս Ատրպէյճանի Ա. Հանրապետութեան իրաւաժառանգորդ։ Ինչ վերաբերում է խորհրդային իշխանութեան օրօք ԱդրխՍՁ–ի մաս կազմելու իրողութեանը՝ ինքնավար մարզի կարգավիճակով, ընդ որում՝ պատմականօրէն հայկական Ար–ցախ գաւառի մի հատուածով միայն, ապա դա Լեռնային Ղարաբաղի, բառիս բուն իմաստով, բռնակցում էր նորաս–տեղծ խորհրդային Ատրպէյճանին, որն իրականացուել է երրորդ երկրի՝ խորհր–դային Ռուսաստանի, համայնավար կու–սակցութեան Կովկասեան պիւրոյի, այ–սինքն՝ իրականում ոչ իրաւազօր կառոյ–ցի կողմից 1921թ. յուլիսի 5–ի գիշերն ընդունուած կամայական որոշմամբ։ Ընդ որում, քննարկելով հարցը եւ ըն–դունելով ոչ մի իրաւական հիմք չունե–ցող այդ փաստաթուղթը, նոյն այդ տխրահռչակ պիւրոն անտեսել էր ոչ միայն այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղը պատմականօրէն Հայաստա–նի մաս էր կազում եւ նրա բնակչութեան 95 տոկոսը հայեր են։ Անտեսուել էր նա–եւ իրաւաքաղաքական առումով ոչ պա–կաս կարեւոր այն իրողութիւնը, որ Ռու–սաստանի կայսրութեան փլուզման ար–դիւնքում Անդրկովկասում երեք ազգա–յին պետութիւնների՝ Հայաստանի, Ատր–պէյճանի եւ Վրաստանի հանրապետու–թիւնների կազմաւորման շրջանում ար–ցախահայութեան լիազօր ներկայացու–ցիչների անդրանիկ՝ 1918թ. յուլիսի 22–ին Շուշիում կայացած համագումարի որոշմամբ երկրամասը նոյնպէս հռչակ–ուել էր անկախ վարչաքաղաքական մի–աւոր՝ ընտրելով Ազգային խորհուրդ եւ կառավարութիւն։ Այսինքն, որ նոյն այդ 1918–1920թթ. Լեռնային Ղարաբաղն անկախ, ինքնիշխան պետութիւն էր՝ պետականութեան բոլոր բաղկացուցիչ–ներով, ներառեալ՝ սեփական բանակով եւ օրինական իշխանութիւններով։ Այլ կերպ ասած՝ Լեռնային Ղարաբաղն առաջին անգամ իր անկախութիւնը հռչակել է տակաւին գրեթէ 100 տարի առաջ, ընդ որում՝ պատմական Արցախի ամբողջ տարածքում, ներառեալ նաեւ՝ ներկայումս Ատրպէյճանի կողմից բռնազաւթուած ու լիովին հայաթափ–ուած Հիւսիսային Արցախում։ Աւելի՛ն. հռչակելով իր անկախութիւնը՝ Լեռնա–յին Ղարաբաղը, փաստօրէն, տարան–ջատուել է որպէս փլուզուած ցարական Ռուսաստանի, այլ ոչ թէ նորահռչակ Ատրպէյճանի Ա. Հանրապետութեան մաս, որի կազմում նա երեք չի էլ եղել։

Ուշադրաւ է, որ նոյնը կամ գրեթէ նոյնը տեղի է ունեցել նաեւ 1991–ի սեպտեմբերի 2–ին, երբ ինքնավար պե–տական կազմաւորման՝ ԼՂԻՄ–ի եւ դե–ռեւս Հայաթափուած յարակից Շահում–եանի շրջանի բոլոր մակարդակների խորհուրդների ժողովրդական պատգա–մաւորների մասնակցութեամբ տեղի ու–նեցած նստաշրջանն ընդունեց «Լեռնա–յին Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման մասին» հռչակագիրը։ Իսկ արդէն 1991թ. դեկտեմբերի 10–ին ար–ցախահայութիւնը հանրաքուէով ամ–րագրեց Լեռնային Ղարաբաղի Հանրա–պետութեան անկախութեան հռչակումը։ Իր նորագոյն պատմութեան մէջ երկրորդ անգամ հռչակելով իր անկախութիւնը՝ Լեռնային Ղարաբաղն այս անգամ եւս տարանջատուեց ոչ թէ որպէս նորահռ–չակ Ատրպէյճանի Բ. Հանրապետու–թեան, այլ փլուզման եզրին յայտնուած ԽՍՀՄ բաղկացուցիչ մաս։ Իրականում նախկին ԱդրխՍՁ տարածքում ձեւաւոր–ուեցին երկու իրաւահաւասար պետակա–ն կազմաւորումնէր՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը եւ Ատրպէյճանի Հանրապետութիւնը։

Այո՛, միջազգային հանրութիւնը, ի դէմս միաւորուած Ազգերի կազմակեր–

պութեան, ճանաչեց Ատրպէյճանի Հան–րապետութիւնը՝ նախկին միութենական հանրապետութեան սահմաններում։ Այո՛, նոյն այդ հանրութիւնը տակաւին կողմ–նորոշուած չէ, եթէ չասենք՝ հիմնակա–նում բացասաբար է տրամադրուած Ար–ցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման հարցում։ Թէկուզ ո՞ւմ յայտնի, չէ որ զարաբաղեան շարժման առաջին իսկ օրերից սկսած արեւմտեան տէրութիւնները, ներառեալ եւ մանա–ւանդ, Ամերիկայի Միացեալ Նահանգնե–րը դրականօրէն էին արձագանգում ար–ցախահայութեան ազգային–ազատագ–րական պայքարին՝ դատապարտելով մի–աժամանակ Մոսկուա– Պաքու իշխանա–կան գոյգի հալածանքներն ու բռնու–թիւններն իր պայքարում համըդուենե–լի ժողովրդավարութեան սկզբունքներով առաջնորդուող արցախահայութեան հանդէպ, առանձնապէս աւելի քան կէս միլիոն հայ քաղաքացիների նկատմամբ Ատրպէյճանում ծայր առած բռնատե–ղահանումները, արիւնալի ջարդերն ու կոտորածները Սոււկայիթում, Պաքոււմ, Կիրովապատ– Գանձակում, այդ հանրա–պետութեան այլ քաղաքներում ու շրջաններում։

Բայց, աւա՛ղ, յետոյ միայն պարզ–ուեց, որ միջազգային քաղաքական հարթակ նետուած այդ կարգի «սրտա–ցաւ» յայտարարութիւնները, բանաձե–ւերը, կոչերն ընդամէնը քողածածկոյթ են՝ տողատակում ունենալով աշխարհա–քաղաքական ընդգրկման հեռագնայ նպատակ, այն է՝ որքան հնարաւոր է արագացնել Խորհրդային Միութեան եւ նրա հետ մէկտեղ ընկերվարական ճամ–բարի, հիւսիսատլանտեան դաշինքի հա–մար ահռելի հակակշիռ դարձած Վարչա–ւայի պայմանագրի կազմակերպութեան փլուզման, տիրող աշխարհակարգի ար–մատական փոփոխման ու միաբեւեռաց–ման ծրագրային գործընթացը, ինչի ոչ միանշանակ արդիւնքներին ականատես ենք ներկայումս։ Իսկ ներկայումս նոյն այդ Արեւմուտքի ծրագրային թիրախը Ռուսաստանի Դաշնութեան փլուզումն ու մասնատումն է՝ «Բաժանի՛ր, որ տի–րես» սկզբունքով։

Քանի որ Արցախն այդ պետու–թեան կազմում չէ, հետեւապէս իբրեւ գործիք հաղել թէ՛ նոյն վաղեմի եռան–դուն հետաքրքրութիւնը ներկայացնի աշխարհի արեւմտեան հզօրների համար։ Այսինքն, ինչպէս յայտնի թեւաւոր խօս–քում է ասւում, «Մաւրն արեց իր գոր–ծը, մաւրը կարող է հեռանալ »։ Այո), հէնց այդպէս՝ Արցախը կատարեց իր գործը՝ իր լուման ներդնելով «չարի կայսրութեան» փլուզման աշխարհաքա–ղաքական խաղում, եւ հիմա կարող է հեռանալ խաղից։

Այնուամենայնիւ, ճիշդ չի լինի ասել, թէ Արցախը բոլորովին դադարել է հետաքրքրել աշխարհի մեծ խաղացողնե–րին։ Հետաքրքրււմ է, ի հարկէ։ Սակայն, ինչպէս ասում են, այնքանով՝ որքանով։ Կռահում էք՝ այնքանը դա Արցախի պե–տականութեան կայացման անժխտելի փաստն է, հանրային կառավարման աս–պարէզում ժողովրդավարական սկզբունքների հաստատմանն ու զար–գացմանն ուղղուած ջանքերը, ընկերա–յին–տնտեսական կեանքի թէկուզ ոչ հսկայաքայլ, բայց, ամէն դէպքում, բնականոն առաջընթացը, Պաշտպանու–թեան բանակի գործօնը, որի մարտունա–կութիւնն իր կաշուի վրայ հարկ եղած ժամանակ, ինչպէս դա անցեալ տարուայ ապրիլին էր, պարբերաբար գգում է մեր

ԱՐՑԱՍԽ... Ծար. էջ 14

ՄԻՔԱՅԷԼ ՀԱԶԵԱՆ
Քաղաքակալ վերլուծաբան

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեան Գախակրթարանի 2016-2017 տարեվերջի հանդէսը

Նախակրթարանի նստարաններուն վրայ անցուցած վեց տարիներէ եւ քրտնաջան աշխատանքէ ետք, տարե-վերջի հանդէսի ուրախ եւ յուզումնալից պահը հասաւ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Վարդգէս եւ Աստղիկ Սա-րաֆեան նախակրթարանի 2017 հունձ-քին համար:

Կիրակի, 11 Յունիս 2017-ին, Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի «Բաստը-մաճեան» թատերասրահէն ներս հա-մախմբուած էր ծնողներէ, ուսուցիչներէ, ազգայիներէ եւ հիւրերէ բաղկացած խանդավառ բազմութիւն մը:

Հանդէսին սկիզբը հնչեցին Գանա-տայի եւ Հայաստանի քայլերգները, որմէ ետք բեմ բարձրացաւ Սուրբ Յակոբ Ազ-գային վարժարանի Վարդգէս եւ Աստ-ղիկ Սարաֆեան նախակրթարանի ընդ-հանուր տնօրէնուհի տիկ. Լենա Գատ-եան, որ բարի գալուստ մաղթեց Գերաշ-նորհ Սուրէն Սրբազան Արքեպիսկոպոս Գաթարոյեանին, Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի յարգարժան բարերարնե-րուն, միութեանց եւ կազմակերպութիւն-ներու պատուարժան ներկայացուցիչնե-րուն, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Կրթական Գործադիր մարմնի ներկայա-ցուցիչներուն, նախկին տնօրէնութեանց անդամներուն, ուսուցիչներուն, շրջա-նաւարտներուն, ծնողներուն եւ ազգա-յիներուն: Բարի գալուստի խօսքէն ետք, ներկայացուցեալ տեսերիզ մը՝ պատրաստուած նախակրթարանի Զ. կարգի աշակերտներուն կողմէ:

Տեսերիզի ցուցադրութենէն ետք, տիկ. Գատեան հրաւիրեց ներկաները յոտնկայս դիմաւորելու նախակրթարանը աւարտող 52 աշակերտները:

Նախքան գեղարուեստական բաժ-նին անցնիլը, տիկ. Գատեան փոխանցեց իր խօսքը: Ան առաջին հերթին շնորհա-կալութիւն յայտնեց բարերարներուն, որոնց ներգրտմը՝ ըլլա՛յ բարոյական, ըլլա՛յ նիւթական, անհրաժեշտ են դպրո-ցի գոյութեան, ապա Հոգաբարձութեան եւ Կրթական Մարմիններուն՝ 2016-2017 տարուան ընթացքին ձեռք բերուած աշ-խատանքներուն եւ ձեռնարկներուն նկատմամբ իրենց քաջալերանքին հա-մար, եւ անձնուէր Միողական յանձնա-խումբի անդամներուն, որոնք ոչ մէկ ճիգ խնայեցին հանդէսի յաջողութեան գծով:

Գեղարուեստական յայտագիրը սկսաւ խմբական արտասանութեամբ՝ Գէորգ Էմինի «Մեր այբուբենը» եւ Խա-

չիկ Դաշտենցի «Հայերէն» քերթուած-ներուն, որուն յաջորդեց ճոխ երաժշտա-կան յայտագիր մը տիկին Դալար Հար-պոյեան-Գալլօլլեանի դեկավարուե-թեամբ: Վարժարանիս երգչախումբը՝ նուագեց ու երգեց ալլազան կտորներ՝ «Guitar's Swing et La Habana» (սրինգի վրայ), «On écrit sur les murs» (երգ), Կոմիտասի «Երկինքն ամպել ա» (սրինգի վրայ) եւ Աննօ Պապաճանեանի՝ «Իմ երեւան» (երգ):

Այս բաժնին աւարտին, ընդհանուր տնօրէնուհի տիկ. Լենա Գատեան խօսք առնելով ըսաւ, որ կ'ուզէ օգտագործել առիթը երախտագիտութիւն յայտնելու անգլիերէնի դասատու տիկ. Արշօ Դեր-ձակեան-Շատուորեանին, որ այս տարի հանգստեան կը կոչուի 35 տարիներու ծառայութենէն ետք: Տիկ. Գատեան ըսաւ. «Տիկ. Արշօն ըրած է աւելին, քան որպէս երկրորդ լեզու անգլերէն դասա-ւանդելը: Ան դաստիարակած է սե-րունդներ եւ հոգ տարած՝ հայ երեխանե-րու (եւ երբեմն անոնց երեխաներուն) մեծ գուարթամտութեամբ: 35 տարիներու ընթացքին Սուրբ Յակոբ նախակրթարա-նի աշակերտները իրմէ սորված են նաեւ կարգապահութիւն եւ վարուելակերպ, երբեմն չփութելով տիկ. Արշօն տնօրէնին հետ: Տիկ. Արշօ եղած է նաեւ խորհրդա-տու մը իր նոր գործընկերներուն՝ բաժ-նեկցելով իրենց հետ ոչ միայն ուսուց-ման եւ դասարանի կառավարման ռազ-մավարութիւններ, այլ նաեւ իր պատ-րաստած տնային խմորեղէններն ու իր ուրախ տրամադրութիւնը: Վերջապէս, բայց ոչ կարեւորութեան կարգով պակաս աշխատանք մը, տիկ. Արշօ մասնակցած է Միողական յանձնախումբին հանդի-պումներուն: Շնորհակալութիւն ձեզի, տիկին Արշօ, օրինակելի ուսուցիչ մը ըլ-լայնուդ համար եւ ուրախ հանգստեան տարիներ»:

Այս խօսքէն ետք, տնօրէնուհին բեմ հրաւիրեց Զ. դասարանի ուսուց-չուհիները, ինչպէս նաեւ տիկ. Արշօն եւ իրենց ծաղկեփունջեր բաժնելով անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնեց:

Շարունակելով խօսքը, տիկ. Գատ-եան ծնողներուն տեղեկացուց, որ յաջորդ տարի Ս. Յակոբի երկրորդական վարժա-րանէն ներս իրենց զաւակներուն ստա-նալիքը պիտի հաւասարի եւ գերազանցէ այն բոլորը, զորս կրնան ստանալ օտար դպրոցներու մէջ. ան չեչտեց, որ աշա-կերտները անկասկած պիտի ստանան հարուստ եւ Քեպէգի Կրթական նախա-րարութեան նոյն ծրագիրը, որոնց վրայ

կու գայ աւելնալու հայ ոգին, հայ մշա-կոյթի խորացումը եւ հայ պատանիի վա-յելուչ ինքնակերտումը:

Տիկ. Գատեան իր խօսքին մէջ ընդգծեց նաեւ հետեւեալը. «Սիրելի՛ աշակերտներ, այսօր ձեր նախակրթարա-նը կ'աւարտէք, ինչ որ կը ներկայացնէ Ս. Յակոբ Ազգային վարժարանի 2-րդ հանգրուանը, առաջինը 6 տարի առաջ-ուան մանկապարտէզի վկայականն էր: Կարեւոր 5 տարիներ կը սպասեն ձեզի, որպէսզի բարելաւէք 3 լեզուներով ձեր կարողութիւնը՝ գրելու, կարդալու, գծե-լու, ներկելու, հաշուելու եւ մտածելու, որ դուք դառնաք հայ պատանիներ եւ շա-րունակէք հայորդիի ինքնակերտումը: Ձեզմէ կը սպասենք օրինակելի վարք ու բարք աշխատասիրութիւն եւ մանաւանդ մեր դպրոցի 4 արժէքներու՝ յարգանքի, պատասխանատուութեան, համագոր-ծակցութեան եւ յարատեւութեան հան-դէպ գիտակցութիւն եւ անոնց համա-ձայն վարուելակերպ:

«Երկրորդականի նոր կեանքի սե-մին, պէտք է նաեւ գիտնաք, որ անձնա-կան եւ հայկական վարժարան յաճախը բախտաւորութիւն մըն է՝ իզիւն բազմա-թիւ զոհողութիւններու թէ՛ ձեր ծնողաց եւ թէ՛ ընդհանուր համայնքին կողմէ: Սակայն այս բախտաւորութեան հետ ալ կու գայ պատասխանատուութիւն մը, առ ի երախտագիտութիւն ձեր ծնողաց, որոնք ընտրեցին հայեցի դաստիարակու-թիւն ապահովող վարժարան մը ձեզի համար եւ ձեր դպրոցին եւ անոր թի-կունք կանգնող մարմիններուն հանդէպ: Պատասխանատուութիւն մը՝ վառ պա-հելու հայկական ոգին: Այսօր այս վկա-յագրին արժանանալը արգիւնքն է ձեր անձնական աշխատանքին եւ յարատե-ւութեան:

Վկայականներու բաշխումը կա-տարուեցաւ տնօրէնուհիին եւ Ֆրանսե-րէնի դասատուներուն տիկիններ Եոլէն Արօլի եւ Սարա Թիմորոյլու Գլուխիէի ձեռամբ:

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի տրամադրած մրցանա-կը ստացաւ Մանէ Դաւթեան, որպէս հա-յերէնի բարձրագոյն միջին ապահովող:

Պոլսահայ Միութեան կողմէ պար-գեւատրուեցան Անի Արապաթեան եւ Մանէ Դաւթեան, որոնք բարձրագոյն միջինը ապահոված են Ֆրանսերէնի մէջ:

ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մաս-նաճիւղի «Մեարոպ Մաշտոց» մրցանա-կին արժանացաւ Սարին Խաչեան, որ իր դպրոցական աշխատանքներուն կողքին

կը մասնակցի նաեւ պատանեկան, մար-գական, եկեղեցական ու մշակութային միութիւններու ակմբային աշխատանք-ներուն:

ՀՕՄ-ի «Շուշի» մասնաճիւղի մրցանակով պարգեւատրուեցան Ռիթա Սամոնեան, Թամար Խաչեան եւ Նարէ Զոհրապեան, որոնք երկրորդ եւ երրորդ բարձրագոյն միջինները ապահոված են հայերէնի մէջ:

ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան «Մհեր Զուլհաճեան» ֆոն-տին նուէրը ստացաւ Թամար Խաչեան, որ ապահոված է գնահատելի միջին իր ուսումնական նիւթերուն մէջ եւ որ իր գործօն մասնակցութիւնը կը բերէ ՀՅԴ Պատանեկան Միութեան աշխատանքնե-րուն:

ՀՄԸՄ «Կամք» մասնաճիւղի վարչութեան մրցանակը ստացաւ Սարին Խաչեան, որ ապահոված է գնահատելի միջին իր ուսումնական նիւթերուն մէջ եւ որ իր գործօն մասնակցութիւնը կը բերէ ՀՄԸՄ «Կամք» միութեանական աշխատանքներուն:

Բոլոր այս մրցանակներուն պայ-մաններէն մէկն էր նաեւ, որ աշակերտը պէտք է ուսումը շարունակէ Ս. Յակոբ Ազգային վարժարանի Բաստրմաճեան երկրորդականէն ներս:

Իւրաքանչիւր աշակերտ ստացաւ Նոր Կտակարան մը՝ նուիրուած Ս. Յա-կոբ եկեղեցւոյ Քոյրերու ժողովին կողմէ:

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հովին ու Հոգաբարձութիւնը շնորհաւորեցին եւ առ ի գնահատանք «Օրհներգութիւն Մեծաքանչին» հա-տորը նուիրեցին հետեւեալ աշակերտնե-րուն.

Կիրակնօրեայ վարժարանէն՝ Թա-մար եւ Սարին Խաչեաններուն, «Նոր Ծաղիկ» երգչախումբէն՝ Սարին Կոս-տանեանին, Վանի Թոքաթեանի, Անի Քէհեպեանի եւ Նարէ Զոհրապեանի:

Հանգիստութեան աւարտին, Գերաշ-նորհ Սուրէն Սրբազան Արքեպիսկոպոս Գաթարոյեան փոխանցեց իր շնորհաւո-րութիւնները բոլորին՝ վկայականաց բաշխման առթիւ: Ան չեչտեց հայ վար-ժարանի առաքելութեան անհրաժեշտու-թիւնը եւ խօսքը փակեց օրհներով ներ-կաները:

Երգչախումբին կողմէ Ս. Յակոբ վարժարանի քայլերգի կատարողու-թեամբ, եւ ապա աշակերտներուն եռան-դուն ելքով աւարտեցաւ վկայականաց բաշխման հանգիստութիւնը:

Հորիզոն

www.horizonweekly.ca

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

Videotron:
HD616 կամ SD16

Bell Fibe:
HD1216 կամ SD216

Շաբաթ - 08:30 (առաջին տիւրում) եւ 1:30am

Կիրակի - 3:30pm

Երկուշաբթի - 08:00, 10:30pm, 1:30am

Երեքշաբթի - 12:00pm

Չորեքշաբթի - 6:30am եւ 7:30pm

Հինգշաբթի - 12:30pm, 12:30am

Ուրբաթ - 3pm

Ուղիղ արձակում՝ www.icitelevision.ca

NOR HAI HORIZON

Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ» յատագիրը կարելի է դիտել Շաբաթ առաւօտները ժամը 9:00-էն 10:00, իսկ նոյն յայտագրի կրկնութիւնները Կիրակի օրերը առաւօտեան ժամը 7:00-8:00 եւ Երեքշաբթի օրերը կեսօրուայ ժամը 12:00-1:00 OMNI 1 կայանէն:

6 ՀՈՐԻԶՈՆ, 3 ՅՈՒՆԻՍ 2017

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Բաստրմաճեան երկրորդականի 2016-2017 տարեվերջի հանդեսը

«Սուրբ Յակոբ դպրոցը երկրորդ տունս է», այս սրտաբուխ նախադասու-թիւներ տարիներու ընթացքին մնայուն կերպով կը գտնենք շրջանաւարտներու կարճ ինքնակենսագրականներուն մէջ, որոնք լոյս կը տեսնեն վարժարանի յիշատակ-տարեգրքին մէջ: Այս տարի, Կիրակի, 18 Յունիս 2017-ին, կարգն էր երկրորդական Ե. կարգի 45 աշակերտներուն՝ մնաք բարով ըսելու իրենց «Երկրորդ տան», վկայականաց բաշխման հանդիսութեամբ:

Այս հանդիսաւոր պահը տեղի ունեցաւ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի «Բաստրմաճեան» թատերասրահէն ներս, ներկայութեան Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Արք. Ջարեանի, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Գառնիկ Աւագ Քահանայ Գոյունեանի, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Կրթական Գործադիր մարմնին, պատկան մարմիններու, միութեանց եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն, Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի բարերարներուն եւ մրցանակներու նուիրատուներուն, նախկին տնօրէնութեանց անդամներուն, ուսուցիչներուն, շրջանաւարտներուն, ծնողներուն եւ հիւրերուն:

Հանդէսին սկիզբը տնօրէնութեան եւ երաժշտութեան ընկերակցութեամբ, հաստատ քայլերով սրահէն ներս մուտք գործեցին 2017-ի հունձքի շրջանաւարտները: Առաջին հերթին բեմ բարձրացաւ հանդիսավար պրն. Մհեր Գարաբաշեան, որ իր բարի գալուստի խօսքը արտասանեց Գանատայի եւ Հայաստանի քայլերգներու յոտնկայս ունկնդրութեան աւարտին:

Գեղարուեստական բաժնով ելոյթ ունեցան երկրորդականի Դ. կարգէն Մալվինա Պուտադեան, որ դաշնամուրի վրայ կատարեց Առնօ Պապաճանեանի «Մեղեդի» կտորը եւ երկրորդականի շրջանաւարտ Ե. կարգէն Վազգէն Նարեկ Գարաբաշեան, որ ամուսնեց Զ. Խրախունիի «Լեռը»:

Գեղարուեստական բաժնին յաջորդեց Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի ընդհանուր տնօրէնուհի տիկ. Լեւա Գատեանի խօսքը. ան բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն եւ ապա շրջանաւարտներուն ըսաւ. «Հպարտ եղէք եւ մի՛ մոռնաք, որ ձեր ծնողները, ձեր վարժարանը եւ ձեր համայնքը կը հաւատայ այն առածին, որ կ'ըսէ . «Լաւ կրթութիւն մը աւելի կ'արժէ քան ժառանգութիւն մը». դուք ունեցաք երկուքը՝ թէ՛ լաւ կրթութիւն եւ թէ՛ հայ ըլլալու եւ Քեպէգի ապագայ չափահաս քաղաքացիները դառնալու ժառանգութիւնը»: Տիկ. Գատեան ընդգծեց, որ այս

բոլոր իրադրոժումները կարելի է՛ր ըլլար ձեռք բերել առանց դաստոտներուն ջանքերուն. ան սրտագին շնորհակալութիւն յայտնեց ուսուցիչներուն՝ իրենց նուիրումին եւ օրինակելի տիպար հանգիսանալուն համար:

Տիկ. Գատեան յիշեցուց նաեւ աշակերտներուն, որ «առանձնաշնորհեալ երեխաներ եղան», սակայն «առանձնաշնորհումին հետ կու գայ պատասխանատուութիւնը», «Մենք ձեզի կը վստահինք՝ բարձր պահելու Սուրբ Յակոբ վարժարանի ջահը ձեր անձնական եւ աշխատանքային ձեռնարկութիւններուն մէջ, եւ մանաւանդ՝ բարձր պահելու մարդկութեան ջահը»:

Ան շարունակեց ըսելով. «Վկայականներու բաշխումէն առաջ, կ'ուզեմ բեմ հրաւիրել երկու հրաշալի աշակերտներ՝ Քարէն Սերայտարեանը եւ Մուշեղ Ճապաղչուրեանը, որոնք Գանատա ժամանելէ ետք մեր դպրոցը յաճախեցին վերջին երեք տարիներուն ընթացքին եւ որոնց մէկ կամ երկու նիւթ կը պակսի՝ ստանալու իրենց երկրորդականի վկայականը՝ շնորհիւ իրենց բացառիկ աշխատանքին, անոնք ամբողջացուցին Ֆրանսերէնի տիրապետութեան (francisation) ծրագիրը, ինչպէս նաեւ Քեպէգի կրթական ծրագրի նիւթերու մեծամասնու-թիւնը»:

Տիկ. Լեւա Գատեան անդրադարձաւ նաեւ յատուկ նուիրատուութեան մը՝ բժ. Արի եւ տիկ. Փաթիլ Մկրտիչեաններու կողմէ տարեկան \$1,000 նուիրատուութեան՝ յառաջիկայ 10 տարիներուն համար, որ պիտի յատկացուի մանկավարժական նորութիւններ կիրարկող ուսուցիչներուն գնահատման: Այս տարուան մրցանակ ստացողներն էին տիկ. Հուրի Տալալեան, պրն. Քրիստինա Պայկըն եւ պրն. Guillaume Lamontagne, որոնք ստացան նաեւ գնահատական յուշատախտակներ բժ. Մկրտիչեանի կողմէ:

Վկայականներու եւ մրցանակներու բաշխումը կատարեցին տիկ. Գատեան եւ տնօրէնութեան անդամ տիկ. Լոռի Ապրաքեան (մրցանակներու ամբողջական ցանկը տեսնել ստորեւ):

Անկէ ետք ժամանակն էր շրջանաւարտներու խօսքերուն. Ֆրանսերէնով ուղերձը կատարեցին Թալիա Ճապրայեան եւ Դալար Տիմիթեան, իսկ հայերէնով՝ Արիանէ Թապաքեան եւ Արա-Անդրանիկ Թփուղեան: Այլ յուզում-նալից պահ մը եւս տեղի ունեցաւ՝ այս տարուան հունձքին կողմէ Արա-Անդրանիկ Թփուղեանը գնահատանքի յուշանուէր մը յանձնեց ընդհանուր տնօրէնուհի տիկ. Գատեանին:

Պրն. Մհեր Գարաբաշեան բեմ հրաւիրեց նաեւ տիկ. Վերա Եագուպեանը որ, իր կարգին, Մնողաց յանձնախումբին

կողմէ գեղեցիկ ծաղկեփունջով մը շնորհակալութիւն յայտնեց տիկ. Գատեանին:

Հանդէսի աւարտին իր սրտի խօսքը փոխանցեց Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Արք. Ջարեանը՝ շեշտելով հայ վարժանի էական դերը ապագայ հայ սերունդներու կերտման մէջ: Սրբազան Հայրը խօսքը աւարտեց «Պահպանիչ»ով:

Ներկաներու բուռն ծափահարու-թիւններուն ներքեւ աւարտականի աշակերտներու ելքով աւարտեցաւ 2016-2017 տարեշրջանի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Բաստրմաճեան երկրորդականի վկայականաց բաշխման հանդիսութիւնը:

Մրցանակներ եւ պարգեւներ
- Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Գանատայի Շրջանային ու Մոնթրէալի «Սանահին» մասնաճիւղի զոյգ վարչութիւններուն կողմէ պարգեւատրուեցան Արիանէ Թապաքեանն ու Թալիա Ճապրայեանը, որոնք բարձրագոյն միջինը ապահոված էին հայերէնի եւ հայոց պատմութեան մէջ. պարգեւը 2018 տարեշրջանին Երեւանի մէջ կայանալիք Համազգայինի Ուսանողական հաւաքին մասնակցիլ է:

- Լաւալի Ս. Գէորգ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ տրամադրած մրցանակին արժանացան Դալար Տիմիթեան եւ Թալիա Ճապրայեան, որոնք բարձրագոյն միջինը ապահոված էին Ֆրանսերէնի մէջ:

- Ի յիշատակ Սարգիս Ղազարեանի տրամադրուած մրցանակը ստացաւ Ճոնաթան Ջարֆաճեան, որ բարձրագոյն միջինը ապահոված էր հայոց պատմութեան նիւթին մէջ:

- Ի յիշատակ Մարիամ եւ Ղազար Ղազարեաններու տրամադրուած մրցանակը ստացաւ Արիանէ Թապաքեան, որ բարձրագոյն միջինը ապահոված էր հայկական մշակութիւնի նիւթին մէջ:

- ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի մրցանակին արժանացաւ Վանի Զաքարեան, որ իր դպրոցական աշխատանքներուն կողքին կը մասնակցի նաեւ գաղութիս միութիւններու ակմբային աշխատանքներուն:

- ՀՕՄ-ի «Շուշի» մասնաճիւղի մրցանակով պարգեւատրուեցան Արա-Անդրանիկ Թփուղեան եւ Դալար Տիմիթեան, որոնք ընդհանուր գնահատելի միջիններ ապահոված էին:

- Լաւալի ՀՅԴ «Սարգիս Զէյթեան» կոմիտէութեան կողմէ պարգեւատրուեցան Դալար Տիմիթեան, Թալիա Ճապրայեան եւ Ճոնաթան Ջարֆաճեան, որոնք հայոց պատմութեան եւ պատմութեան նիւթերուն մէջ ապահոված էին բարձրագոյն միջինները:

- Գանատայի Առեւտրականներու

խորհուրդին տրամադրած մրցանակին արժանացան Դալար Տիմիթեան եւ Թալիա Ճապրայեան, որոնք բարձրագոյն միջիններ ապահոված էին անգլերէնի մէջ:

- Գանատայի Առեւտրականներու խորհուրդի գործարարութեան (entrepreneuriat) մրցանակին արժանացաւ Արաքս Թորոյեան:

- Քեպէգի Հայ Բժշկական Միութեան (AMAQ) կողմէ պարգեւատրուեցաւ Ռաֆայէլ Պատուէն Մանուկեան, որ բարձրագոյն միջինը ապահոված էր թուաբանութեան եւ գիտութիւններու նիւթերուն մէջ:

- Մըզ Կիլ համալսարանի կրթանպաստներ ստացան Արա-Անդրանիկ Թփուղեան (գիտութեան նիւթերուն համար) եւ Լոռի Մղոսեան (պատմական նիւթերուն համար):

- Տէր եւ տիկին Փիէռ Ասլանեաններուն կողմէ պարգեւատրուեցան Դալար Տիմիթեան եւ Թալիա Ճապրայեան, որոնք տարիներու ընթացքին վարժարանիս Meritas վկայագրին արժանացած են:

- Գիտութեան մէջ գնահատելի միջիններ ապահոված ըլլալուն համար, բժ. Կարպիս Հարպոյեանի նուիրած գրքերը ստացան Արա-Անդրանիկ Թփուղեան, Գարին Զաքարեան, Դալար Տիմիթեան, Էմիլի Տորամաճեան, Սալբի Թորոսեան, Վանա-Մարիա Յակոբեան եւ Ռաֆայէլ Պատուէն Մանուկեան:

- Հայերէնի մէջ գնահատելի միջիններ ապահոված ըլլալուն համար, բժ. Կարպիս Հարպոյեանի նուիրած գրքերը ստացան Արա-Անդրանիկ Թփուղեան, Արիանէ Թապաքեան, Էմիլի Տորամաճեան, Թալիա Ճապրայեան, Լոռի Մղոսեան եւ Վիքթորիա Սվանցեան:

- Վայելուչ վարուկալիերայի համար վարժարանիս ընդհանուր տնօրէնուհիին կողմէ տրամադրուած մրցանակը ստացան Առէն Մեղքոնեան, Սարգիս Ղազարեան, Վանա-Մարիա Յակոբեան եւ Վանի Զաքարեան:

*

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի տնօրէնութիւնը այս հաղորդագրութեան առիթով կ'ուզէ յայտարարել, թէ Թալիա Ճապրայեան արժանացաւ Gouverneur Général-ի մետալին՝ 2016-2017 տարեշրջանին ընդհանուր բարձրագոյն միջինը ապահովելուն համար, ինչպէս նաեւ Քեպէգի Մաթեմատիքի միութեան (Association mathématique du Québec) կողմէ պատուոյ գիր կը ստանայ Սեւակ Պաղատասարեան, որ 8-րդ հանդիսացաւ նահանգի ընդհանուր դասաւորման մէջ:

Սրտագին շնորհաւորութիւններ Սեւակին, Թալիային եւ մեր բոլոր մրցանակակիրներուն:

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի շրջանաւարտներ գնահատանքի կ'արժանանան Համազգայինի կողմէ

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Գանատայի Շրջանային վարչութիւնն ու Մոնթրէալի «Սանահին» մասնաճիւղի վարչութիւնը կը շնորհաւորեն Սուրբ Յակոբ Ազգ. վարժարանի «Բաստրմաճեան» երկրորդականի աւարտական դասարանէն Արիանէ Թապաքեանն ու Թալիա Ճապրայեանը՝ հայերէնի եւ հայոց պատմութեան մէջ բարձրագոյն միջինը ապահովելու առիթով: Առ ի գանահատանք՝ Համազգայինը պիտի հովանաւորէ Արիանէի եւ Թալիայի մասնակցութիւնը 2018 տարեշրջանին կայանալիք Համազգայինի Ուսանողական հաւաքին, որ տեղի պիտի ունենայ Երեւան:



Համազգայինի «Սանահին» մասնաճիւղի վարչութիւն

Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝

ՎԱՆԳՈՒԸՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00

ԹՈՐՈՆԹՕ- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690
Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00

ՍՈՆԹՐԵԱԼ- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM
Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00
Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30
Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00
«Վանայ Ձայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00

ՀԱՄԻԼԹՆ- «Հայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca

Արամ Մանուկեանի յուշարձանը եւ մեր անժամանցելի պարտաւորութիւնը

Հայաստանի անկախ պետականութեան հոյա–կերտման մեծ հաիւրամեակի սեմին, քաղաքամայր Եր”ւանի իշխանութիւնները յայտարարած են նախագ–ծային մրցոյթ Արամ Մանուկեանի յուշարձանը կանգ–նելու օրինակելի առաջադրութեամբ։ Մեծ ուստիւն մըն է ասիկա մեր պետականութեան հարազատ արմատե–րուն վերադառնալու “Լ պատմական ճշմարտութիւնը սերունդներու յիշողութեան մէջ ամրագրելու իր էական մտատեսիլով։ Կը շնորհաւորենք քաղաքապետ Տարօն Մարգարեանն ու բոլոր անոնք, որոնք կրցան այս նա–խաձեռնութիւնը իրականութեան վերածել յաղթահարե–լով խորհրդային ժամանակներէն ժառանգուած քաղա–քական “Լ հոգեբանական յայտնի խոչընդոտները։

Քաղաքապետութեան վերոյիշեալ յայտարարու–թենէն կ’իմանանք նա”ւ, որ Արամի յուշարձանը պիտի տեղադրուի Հանրապետութեան Հրապարակի անմիջա–կան մերձաւորութեան մէջ գտնուող Նալբանդեան եւ Արամ փողոցներու խաչմերուկին վրայ։ Պարագա՛յ մը՝ որ ինքնին հարցեր կը յարուցէ, զորս անպայման պէտք է բարձրաճայնել։ Ի”նչ նպատակով, այսքան տարի ետք, քաղաքապետութիւնը ընտրած է քովընտի այդ վայրը հայոց անկախ պետականութեան հիմնադիր հօր յուշարձանը տեղադրելու համար։ Ինչու” ոչ՝ նոյնինքն Հանրապետութեան Հրապարակի՛ն վրայ, ուր անցեալին իր տիրական հասակով կանգնած էր խորհրդային կայս–րութեան հիմնադրին՝ Լենինի արձանը։ Զայն գետեղող–ները ի”նչ գիտէին մեր կեդրոնական հրապարակին մա–սին, որ մենք այսօր իսկ դեռ կը դժուարանանք յստա–կօրէն ընթռնելու։

Սրտանց ողջուենելով հանդերձ քաղաքապետու–թեան այս նախաձեռնութիւնը, կ’ուզենք անմիջապէս աւելցնել, որ մենք իրաւունք չուենինք առայժմ դեռ տօնելու այս կարեւոր իրագործման փաստը նկատի առ–նելով այն մեծ ու անաւարտ գործը, որ դեռ կ’ըսպասէ հայ հանրութեան հետեւողական եւ աշալուրջ միջամ–տութեան։

Պէտք է անկեղծօրէն արձանագրենք, որ քաղա–քապետարանի յայտարարութիւնը ինքնաբերաբար ծնունդ կու տայ շարք մը հարցադրումներու եւ մտո–րումներու։

Պէ”տք է յիշեցնել, որ մենք գործ ունինք հայ ան–կախ պետականութեան դարբինը հանդիսացող Արամի բարոյական հսկայ անձնաւորութեան հետ, որուն գործը բախտատելիութեան եզրեր չուենի հանրապետութեան բոլոր ժամանակներու մարդերու եւ հանգամանքներու տարողութեանց հետ։ Ան վեր է բոլոր չափանիշներէն։

Ան մեր տեսակի չափանիշն իսկ է, որ կոփուեցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դարբնոցին մէջ հայը իր գոյութեան ճահիճէն դուրս բերելու վեհագոյն առաջադրութեամբ։ Մենք գործ ունինք Վանի հերոսա–կան ինքնապաշտպանութեան առաջնորդին, այդ յա–խուռն ապստամբութենէն ծնած հայ պետականութեան առաջին կորիզը ստեղծողին, զայն դեկավարողին, ռու–սական բանակներու անմիտ նահանջով պայմանաւոր–ուած համաժողովրդական գաղթի անվտանգութիւնը ապահովողին, իր բախտին լքուած ար”ւելահայութեան ճակատագիրը իր ձեռքերուն մէջ առնողին, զայն քա–ջօրէն տնօրինողին, Երեւանի ամբողջ ժողովուրդին կողմէ անվիճելիօրէն հռչակուած փրկարար «գիկտա–տոր»ին, թուրք ջարդարար բանակի յառաջխաղացքին դիմաց «վհատ մարդկանցից» հօր բանակ դարբնողին եւ Սարդարապատի եւ Բաջ Ապարանի բախտորոշ ճա–կատամարտերը կարելի դարձնող մեծ առաքեալին հետ։ Մենք գործ ունինք մեր կոտորակուած ինքնութեան բե–կորները ի մի բերողին, մեր մետաղը ձուլողին, մեզ ամ–բողջացնողի՛ն հետ։ Արգեօ”ք մեր պետութեան հիմնար–կային յիշողութիւնը (institutional memory) այնքան տարտամ է այսօր, որ մենք դադրած ենք այլ”ւս Արամը իր լիարժէք իրողութեանը մէջ ճանչնալէ։

Թող ներուի ինծի ըսել, որ մեծ անհամաչափու–թեան մը վկան ենք ազգովին։ Փաստօրէն տեղ մը հար–ցը դուրս եկած է իր բնական եւ իսկական չափերէն։ Այլապէս ինչպէ՞ս բացատրել այն ակնբախ անհաւա–սարութիւնը, որ կայ հայոց պատմութեան ԱՐԱՄ եր”ւոյթին “Լ քաղաքապետական այս ժուժկալ – թէկուզ նախանձախնդի՛ր – յայտարարութեան միջ”ւ։

Բնականաբար այստեղ գոյութիւն չուենի քաղա–քապետ Տարօն Մարգարեանի եւ Երեւանի քաղաքապե–տութեան առած որոշման ոգին նսեմացնելու որեւէ դի–տաւորութիւն։ Քաղաքապետութիւնը իր հարազատ դե–րին մէջն է, երբ կ’որոշէ ինքնիշխան մեր երկրի մայրա–քաղաքի առաջին ինքնիշխան առաջնորդին յիշատակը յաւերժացնել։ Խնդրոյ առարկան Քաղաքապետարանի նախաձեռնութիւնը չէ։ Բայց մենք իրաւունք ունինք հարց տալու, թէ ու”ր է համագգային կշիռով փայլող արարքը այս բոլորին մէջ։ Ու”ր է նախագահական գե–րաստիճան հանգամանքով հնչող հրամանագիրը։ Ու”ր է ՀՀ Ազգային Ժողովի միաձայնութեամբ նուիրագործ–ուած պատմական բանաձ”ւը Արամի վաստակին մեծու–թիւնը հռչակող։ Ու”ր է պետական այն յանձնաժողովը, որ ՀՀ Նախագահին, ՀՀ Վարչապետին, կառավարութեան անդամներուն “Լ մեր բանակի հրամանատարութեան եւ

Վճռականութեան պահանջ

յետադարձ կապի ապահովման, ցանկացած, նոյնիսկ լա–ւագոյն ծրագիր դատապարտուած է։

Խօսքի եւ գործի հակասութեան ամենափոքր դրսեւորումը, ինչը գրեթէ միշտ բնորոշ է եղել մեր իրա–կանութեանը, քաղաքացին արձանագրում է ու պետու–թեան, իշխանութեան հանդէպ վերաբերմունք ճշգում։ Բացասական վերաբերմունք” բոլոր հետեւանքներով։ Կառավարութիւնից պահանջում եմ յատուկ ուշադրու–թիւն դարձնել այս հանգամանքին։

Ասում էք՝ կոռուպցիայի, մենաշնորհների դէմ պայքարելու էք, պէտք է գործնական քայլերով ապա–ցուցէք։ Ասում էք՝ արտօնեալներ, հովանաւորեալներ չեն լինելու, ասում էք՝ հաւասար մրցակցային պայ–մաններ էք ապահովելու, օրէնքը տարածուելու է բոլորի վրայ, հարկային–մաքսային մարմինները անկողմնակալ են լինելու, իրաւապահները ծառայելու են ոչ թէ իշխա–նութեանը, այլ՝ քաղաքացուն, դարձեալ պէտք է գործ–նականում ապացուցէք։ Շոուները (ցուցադրական երե–ւոյթները– խմբ.), խարոււանքները, մամուլով ներիշ–խանական նստածները վիճակ չեն փոխելու։

Կոնկրետ մարդը պէտք է տեսնի իր հանդէպ պե–տական մարմինների, պաշտօնեաների վերաբերմունքի էական տարբերութիւն։ Հանրային ծառայողի նոր վար–քականոն է պէտք պարտադրել, նոր մօտեցումներից բխող կադրային քաղաքականութեամբ։ Ապրիլեան օրե–րից յետոյ ասել եմ՝ այսպիսի ժողովուրդը այլ վերաբեր–մունքի է արժանի։

Առարկայական, բովանդակային քննարկումից խուսափողներ միշտ են լինելու։ Բայց ե՛ւ նրանց, ե՛ւ հանրութեան համար հարկ եմ համարում ծրագրից մէջ–բերել մի քանի բանալի արտայայտութիւններ. «հասա–րակութիւնում շրջանաւորուող առաջադէմ գաղափար–ներ», «անվտանգ, արդար, ազատ, խելացի Հայաստան», «կիրթ, մոտիվացուած, չարժեւնակ աշխատուժ», «ներ–քին ռեսուրսների արդիւնաւէտ եւ խելացի օգտագոր–ծում», «Հայաստանի թուալին օրակարգ», «Սփիւռքա–հայրութեան եւ Հայրենիքի ամուր կապի ստեղծման բա–նաձեւ», «ազգ–բանակ», «արտահանումը՝ 40–45 տո–կոս», «կապիտալ ծախսերի աստիճանական աւելացում»,

մեր հոգեւոր պետերուն եւ այլ բարձրագիր հեղինակու–թիւններու կողմէ գլխաւորուած՝ հրապարակ կ’իջնէ Արամ Մանուկեանի յուշարձանը կոթողելու իր որոշու–մով։ Ինչու” բացակայ են այս նախաձեռնութենէն հայոց պետութեան առաջին դէմքերը, ՀՀ Ազգային Ակադեմ–իայի, մտաւորականութեան, մշակոյթի բերդերու, աշխա–տաւորութեան, երիտասարդութեան շերտերը։ Ինչու” ներառուած չէ Սփիւռքը իր ողջ հասակով։

Մեր խնդիրը Արամ Մանուկեանի արձանը կանգ–նեցնելու սոսկ անհրաժեշտութիւնը չէ, այլ Արամով մարմնաւորուած մեր ազգային կենսափրկխոսքայու–թեան վերահռչակու”մը որպէս ազգային գերակշիռ ուխտ։ Հետ”ւաբար մեր ակնկալութիւնն է, որ ան տե–ղադրուի հրապարակի սրտին վրայ (ոչ՝ կողքի փողոցին մէջ) որպէս վերջնական ազդարարութիւն եւ որպէս անշրջանցելի յանձնառութիւ՛ն՝ բոլոր վաղուան մար–տահրաւէրներուն դիմաց։ Զայն չկոթողել հրապարակին իսկ վրայ կը նշանակէ տատամսիլ․ կը նշանակէ փա–խուստ տալ մեր վճռական պարտաւորութիւններէն․ կը նշանակէ գիջիլ մեր հաւաքական հպարտութիւնը․ կը նշանակէ աշխարհին ներկայանալ ծուռվիզ “Լ վեհերոտ։

Մենք ոչ միայն պիտի արժանաւորութեամբ կեր–տենք այս կոթողը, այլեւ միանգամընդմիշտ ազատենք Արամի Տունը շուկայի չահամոյներու գերութենէն “Լ զայն վերածենք Արամի Տուն–Թանգարանի։ Միաժա–մանակ պիտի ազատենք Հայաստանի Հանրապետու–թեան երբեմնի կառավարութեան տունը իր ներկայի նուաստացած վիճակէն եւ զայն վերածենք Անկախու–թեան Հիմնարկի (Independence Institute), որուն պատե–րուն միջեւ պիտի ձեւաւորուի մեր ռազմավարական միտքը։

Այս բոլորը Արամի գաղափարական ժառանգու–թեան խորհրդանիշներն են եւ կարելի չէ գանոնք ան–ջատել իրարմէ։ Մեր անշրջանցելի պարտաւորութիւնն է այսօր վերականգնել Արամի գործէն բխող ազգային մեծ պատգամը իր ամբողջութեանը մէջ, յստակ եւ ան–խաթար։ Մեր պարտաւորութիւնն է վերականգնել զմեզ այդ պատգամի հրեղէն ներոյժով։ Քանի որ մենք անընկճելի ենք, երբ Արա՛մն ենք։ Ան եղաւ իր ազգը եւ հրաշակերտեց իր ժամանակը։ Հիմա եկած է ժամանակը, որ ազգը ըլլայ զինք։ Ըլլայ Արա՛մը։ Որպէս միտք։ Որ–պէս կամք։ Որպէս լինելութիւն։ Մէկ ու միասնական։ Առանց յետին մտքի։ Առանց թիւր կասկածներու։ Առանց ապառիկ հաշիւներու։ Վճիտ, բիւրեղ, վերջնա–կան։ Հա՛յ։

Կարօ Արմենեան

ՀՀ Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան պատգամաւոր Աղուան Վարդանեանի ելոյթը՝ 2017 Յունիս 22ին, կառավարութեան ծրագրիի քննարկ–ման ժամանակ.

Այս կառավարութեան նախորդ՝ կարճաժամկէտ ծրագիրը բնորոշել եմ մէկ բառով՝ գործնական։ Մինչեւ այսօր արուածի հիմքով՝ վերահաստատում եմ այդ գնահատականը՝ արդէն իրբեւ այս վարչապետի ու այս կառավարութեան բնութագիր։

Գործնականութիւնը այս փուլում, թերեւս, ամե–նապահանջուած յատկանիշն է։ Երբ կատարուած է հանրային կեանքի բոլոր ոլորտների ախտաճանաչումը, երբ համատեղ ուժերով ձեւակերպուած են երկրի առջեւ ծառացած ներքին ու արտաքին դժուարագոյն մար–տահրաւէրները, երբ նախանշուած է ուժեղ, մրցունակ, ազատ պետութիւն դառնալու նպատակը, ամէնօրեայ գործնական աշխատանքը ալլընտրանք չուենի։

Ներկայացուող ծրագիրը, անկախ տարբեր կար–ծիքներից, հարկ եղալից աւելի մանրակրկիտ է՝ ոլորտ առ ոլորտ յստակ, չափելի, կոնկրետ պատասխանա–տուութիւն ենթադրող ժամանակացոյց–անելիքներով։ Քաղաքացին, քաղաքական ուժերը, ցանկութեան դէպ–քում, կարող են հետեւել ժամանակացոյցին եւ արածի ու չարածի հաշուետուութիւն պահանջել։

Մրագրի առանցքը լայնամասշտաբ բարեփո–խումներն են, որոնք, մեր բառապաշարով, պէտք է լի–նեն արմատական ու որակական։

Երկրի իրավիճակից մեկնելով՝ արմատական բա–րեփոխումները հանրութեան որոշ շերտերի համար կա–րող են նաեւ ցաւոտ լինել։ Այս առումով չափազանց կարեւոր է, որ ծրագրի նշանային՝ «բարձրացնել եւ ամ–րապնդել արդարութեան ու վստահութեան մթնոլորտը մեր հասարակութիւնում» արտայայտութիւնը կեանքի կոչելու տեսանելի քայլեր կատարուեն։

Եթէ կառավարութիւնը կարողացաւ հանրութեան գոնէ մի մասի մօտ կոնկրետ արդիւնքներով լաւատե–սութիւն, վաղուայ հանդէպ հաւատ ներշնչել, հասարա–կութեան առողջ հատուածը կը մասնակցի բարեփո–խումներին։ Առանց այդպիսի մասնակցութեան, առանց



ԲԱՐԳԵՆ ԱՐԹԵՂԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ՝
Գևորգյանի Հայոց Թեմի

Հայաստանեայց Առաքելական եկեղեցին մեծ հանդիսությամբ կը նշէ Քրիստոսի Այլակերպութիւնը, որ միացած է հայոց հեթանոսական կրօնքէն յիշատակ փառացած Վարդավառի տօնին:

Թաբոր լեռան վրայ Յիսուս Իր երեք աշակերտներուն՝ Յակոբոսի, Յովհաննէսի ու Պետրոսի ներկայութեամբ, պայծառակերպուեցաւ եւ Իր աստուածային փառքով ու տեսիլքով յայտնուեցաւ: Հին Կտակարանի ներկայացուցիչներէն՝ Մովսէս եւ Եղիա մարգարէները երեւցան ու հաստատեցին մարգարէներու կողմէ նախագուշակուածը՝ Քրիստոսի Աստուծոյ Որդի ըլլալու ճշմարտութիւնը: Նոյն պահուն աստուածային ճշմարիտ ու քաղցր ձայնը, երկրորդ անգամ ըլլալով, կը վկայէ «Ատիկա է իմ սիրելի Որդիս, Անո՛ր լսեցեք»: Առաջին անգամ աստուածային այդ քաղցր ձայնը լսուած էր Յիսուս Քրիստոսի տնօրինական կեանքի սկզբնաւորութեան: Ահաւասիկ, երկրորդ անգամ էր, որ այդ ձայնը լսելի կը դառնար. Թաբոր լեռան երկնականարին վրայ, Քրիստոսի կեանքի վերջին հանգրուանին, հաստատելու եւ վկայելու, որ Ա՛ն է աշխարհի Փրկիչը, Աստուածորդին, որ եկաւ ձեզի հետ ըլլալու, ձեզ առաջնորդելու: Եկաւ ձեզ անկեալ վիճակէն ձերբազատելու, մէկ խօսքով՝ ձեզ ձեր մեղքերէն ազատելու եւ մանաւանդ լուսաւորելու ձեր խաւարած սրտերն ու հոգիները:

Թաբոր լեռան վրայ Յիսուս աղօթեց եւ այդ պահուն այլակերպեցաւ: Ան յաճախ կ'աղօթէր եւ շեշտը կը դնէր աղօթքի կարեւորութեան վրայ: Աղօթքը իւրաքանչիւր մարդու կեանքի գերագոյն սկզբունքը պէտք է դառնայ, որուն միջոցով կարելի է խօսիլ, հոգին բանալ Աստուծոյ: Մեր բոլոր սուրբերը, նահատակները, հայրապետները, ճգնաւորները աղօթքով անցուցին իրենց կեանքը եւ ամենէն յաջող ու աստուածատես պահերը ապրեցան:

Հետեւաբար, մեր կեանքի հիմնական սկզբունքը դարձնելով աղօթքը, անխափան եւ անձանձրոյթ կատարենք զայն, միշտ յարաբերութեան մէջ ըլլալով Աստուծոյ հետ:

Թաբոր լեռան վրայ Քրիստոս հոգեկան այլակերպութեան պահ մըն էր, որ ապրեցաւ: Քրիստոս կու գայ սորվեցնելու մեզի, որ մենք եւս պէտք ունինք հոգեկան լուսաւորութեան, որպէսզի կարենանք քալել լուսաւոր ճանապարհէն՝ դառնալու լոյսի որդիներ:

Ներկայ աշխարհը պէտք ունի Թաբոր լեռան վրայ շողացող լոյսին՝ փայլելու եւ գործելու իրմով: Այդ լոյսն էր որ դարեր շարունակ շողաց մեր երկնականարին վրայ, մեր սրտերուն ու հոգիներուն մէջ: Իմ աղօթքս է, որ այդ լոյսը միշտ վառ մնայ մեր կեանքին, հոգիներուն ու սրտերուն մէջ:

Հետեւաբար, եկէ՛ք վերանորոգուինք, պայծառակերպենք մեր կեանքը, լուսաւորենք մեր ճանապարհը եւ ԼՍԵՆՔ ՈՒ ՀԵՏԵԻՒՆՔ ԱՆՈՐ...



թուականին:

Իր գահակալութեան շրջանին տեղի ունեցաւ հայ ժողովուրդի դպրութեան ամենանշանաւոր դէպքը՝ Հայ գիրերու գիտը, 406 թուականին, Ս. Մեսրոպ Մաշտոցի ջանքերով եւ Ս. Սահակ հայրապետին ու Վռամշապուհ թագաւորին օժանդակութեամբ:

Վռամշապուհ թագաւորի հովանաւորութեամբ, Սահակ եւ Մեսրոպ իրենց աշակերտներով, դպրանոցներ կը բանան Հայոց երկրի ամէն կողմերը:

Անոնք նաեւ կը պատրաստուին Աստուածաշունչի առաջին թարգմանութեան եւ յունարէն ու ասորերէն բնագիրներէն կը թարգմանեն գանիկա: Իր մտաւորական աշխատանքներով զարկ տուաւ եկեղեցւոյ պայծառութեան: Ան իր գրական վաստակով եղաւ հիմնադիրը եկեղեցական

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ

մատենագրութեան եւ ազգային դպրութեան: Վախճանեցաւ 437 թուականին՝ փակելով Լուսաւորիչ տոհմին հայրապետական շառաւիղը եւ թաղուեցաւ Աշտիշատի մէջ:

Ս. Սահակ Հայրապետ նկատուած է հայ ժողովուրդին մտքի Լուսաւորիչը:

Սահակ Կաթողիկոս եւ Մեսրոպ Մաշտոց, իրենց աշակերտներով կը թարգմանեն Աստուածաշունչ մատենաւր եւ կը տարածեն զայն հայ ժողովուրդին մէջ:

Այսպիսով հայ եկեղեցւոյ սուրբ կամարներուն տակ Աստուծոյ ձայնը հայերէնով կը հասնի իւրաքանչիւր հայ հաւատացեալին, որ հունտի մը նման սերմանուելով անոնց սրտերուն մէջ, մէկի տեղ երեսուն, վաթսուն եւ հարիւր հաւատքի հատիկներ կը պտղաբերէ Աստուծոյ:

Ս. Մեսրոպ Մաշտոց իր վաստակաւոր կեանքին վախճանը կը կնքէ 441 թուականին եւ կը թաղուի Օշական գիւղին մէջ, ուր մինչեւ այսօր որպէս ուխտատեղի կը գտնուի իր գերեզմանը:

ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆՔ

Բոլորին պահապանը՝ Քրիստոս,
Քու աջդ թող հովանի ըլլայ իմ վրաս՝
ցերեկ ու գիշեր, տանը եղած ժամանակ,
ճանապարհ երթալու ժամանակ,
քնանալու եւ արթննալու,
որպէսզի երբեք չսասանիմ.
Եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինծի՝
բազմամեղիս.

Ամէն:



ՀՈԳԵԻՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Ոմանք բախտագուշակի կ'երթան. բախտագուշակի դիմելը սխալ է:

Աստուածաշունչը կը պատուիրէ քարկոծել վիուկն ու հմայողը (Ղւ 20.27): Կ'արգիլէ հմայութիւն եւ գուշակութիւն ընելը (Ղւ 19.26): Կը պատուիրէ չդիմել վիուկին ու հմայողին, որպէսզի չպղծուինք (Ղւ 19.31): Զօրեղ կերպով կը շեշտէ, որ բախտի նայիլը, գուշակութիւն, հմայութիւն եւ դիւթութիւն ընելը, կախարդ, վիուկ, նշանագէտ կամ մեռելահմայ ըլլալը՝ մեզ Աստուծոյ աչքին զարշէլի կը դարձնեն (Բ.Օր 18.10-12): Աստուած կը հաստատէ, որ կախարդութիւն եւ հմայութիւն ընելը կամ այդպիսիներուն քով երթալը ՉԱՐՈՒԹԻՒՆ է (Դ.Թգ 17.17, 21.6: Բ.Մն 33.6: Թւ 22.7: Ես 47. 9, 12: Եզ 21.21-23, 29: Ես 2.6-12: Դն 2.2, 5.7, 15: Ա.Տմ 4.1-2 եւ այլն):

Ինչո՞ւ մարդիկ բախտագուշակի կ'երթան:

Կ'երթան գիտնալու համար իրենց ապագան: Ասիկա Աստուծոյ կամքին հակառակ բան է, որովհետեւ Աստուած չ'ուզէր, որ մենք ապագան գիտնանք (Դն 2.27, 4.7): Աստուած կ'ուզէ, որ մենք օրը օրին հաւատքով ապրինք: Կ'երթան մէկուն գործի «յաջողութիւն» բերելու համար, իսկ ուրիշի մը՝ գործերու ձախողութիւն, մէկու մը նեղութիւն տալու համար, ուրիշի մը՝ նեղութիւնը փարատելու: Այդպիսիներ կը մոռնան, որ Աստուած ի՛նքն է մարդոց օգնողն ու օրհնողը, զօրացնողն ու զօրավիգ կանգնողը: Կ'երթան՝ ասոր-անոր թուղթ ընելու համար: Այդպիսիներուն կ'ըսենք. «Թուղթ ընելու փոխարէն, աղօ թք ըրէք իրարու համար: Թուղթով ձեր նմանը չարի կապանքին տակ առնելու փոխարէն, աղօթքով զանոնք ազատեցէք չարին կապանքէն: Երբ թուղթ ընէք, կը դառնաք գործակիցները սատանային, իսկ երբ աղօթք ընէք՝ կը դառնաք գործակիցները Աստուծոյ»:

Կ'եզրակացնեմ ըսելով. «Սուրճի գաւաթ կարդալու փոխարէն՝ Աստուածաշո՞ւնչ կարդացէք: Կապար թափելու փոխարէն՝ արցո՞ւնք թափեցէք խաչին առջեւ: Կապոյտ աչք կախելու փոխարէն՝ խաչ կախեցէք ձեր վիզերէն: Զիտ պայտ դնելու փոխարէն՝ սրբապատկերնէ՛ր դրէք: Բախտագուշակի դիմելու փոխարէն՝ աղօթողներո՞ւ դիմեցէք: Իրարու դէմ թուղթ ընելու փոխարէն՝ աղօ՞թք ըրէք իրարու համար»:

Ճարինակ՝ Օ. Լոր. Մէլոյեան



ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ԱՒԱԶԱՏՈՒՓԸ

Շաբաթ առտու տղեկ մը իր աւագատուփին մէջ կը խաղար: Ան իր խաղալիքէ ինքնաշարժները ունէր նաեւ պզտիկ սափորն ու փայլուն կարմիր կերպրնկալէ բաժը: Մինչ ճամբաներ եւ բապուղիներ կը բանար կակուղ աւազին վրայ, ան մեծ քար մը գտաւ, որ իրեն արգելք էր:



Տղեկը քարին չորս կողմը փորեց, զայն հողէն դուրս հանելու միտումով: Քիչ մը ջանքով հրեց եւ ոտքերը գործածելով քարը կրցաւ աւագատուփին մէկ ծայրը տանիլ, հակառակ անոր որ ինք պզտիկ էր եւ քարը շատ մեծ: Սակայն երբ աւագատուփին ծայրը բերաւ մեծ քարը, տեսաւ որ անկարող էր զայն տուփէն դուրս գլորելու:

Փորձեց քարը դուրս հրել, բայց ամէն անգամ որ կը խորհէր, թէ կը յաջողէր իր նպատակին հասնելու, քարը ետ տուփին մէջ կիյնար:

Պզտիկ տղան քրտնեցաւ, յոգնեցաւ, բայց շարունակեց փորձել քարը դուրս հանել իր աւագատուփէն: Փոքրիկ մատիկները ցաւեցան, բայց ի գուր:

Վերջապէս բարկութենէն սկսաւ լալ: Այս բոլոր ժամանակը հայրը նստասենեակի պատուհանէն կը դիտէր զակիկն ըրածները: Մինչ արցունքները քրտնած այտերէն վար կը գլորէին, մեծ շուք մը ինկաւ տղուն եւ աւագատուփին վրայ: Այդ հօրը շուքն էր: Հանդարտ բայց հաստատ ձայնով ան ըսաւ, «Տղա՛ս, ինչո՞ւ ամբողջ ուժդ չգործածեցիր»:

Ընկճուած տղան հեծկլտալով պատասխանեց. «Սակայն հայրի՛կ, գործածեցի: Ի՛նչ ուժ որ ունիմ, գործածեցի»:

«Ո՛չ, տղա՛ս», սրբազրեց Հայրը քաղցրութեամբ, «քու ամբողջ ուժդ չգործածեցիր: Դուն զիս չկանչեցիր»:

Այդ ըսելով հայրը ծռաւ, քարը շալկեց եւ աւագատուփէն դուրս դրաւ:

Մենք ալ նոյնը չենք ըներ յաճախ: Մեր ուժերուն կը վստահինք մեր «քարերը» վերցնելու, մինչդէռ Հայր Աստուած մեզ կը դիտէ խանդաղատանքով եւ կը սպասէ, որ Զինք կանչենք, որպէսզի մեր ծանր ու մեծ «քարերը» վերցնէ մեր կեանքէն:

«Տէրը փնտռեցէք, քանի որ անիկա կը գտնուի. Զանիկա կանչեցէք, քանի որ անիկա մօտ է»: (Եսայ. 55:6)

Քրիստոս



ՍՈՒՐԲԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

Աբրահամ եւ Խորեն Քահանաներ



Աբրահամ եւ Խորեն վկաները եղած են Ղեւոնդեանց հոգեւորականներուն խումբին մէջ երկու քահանաներ, որոնք եւս կը բռնադատուին, որպէսզի ուրանան քրիստոնէութիւնը եւ դառնան կրակապաշտ: Անոնք կը մերժեն ենթարկուիլ հրահանգին կառչած ժաւով իրենց քրիստոնէական հաւատքին: Կը դատեն զիրենք եւ սակայն ոչ մէկ ամբաստանութիւն գտնելով անոնց վրայ, պարզապէս ականջնին կը կտրեն եւ արքունիքի ախոռներուն մէջ որպէս ծառայ կ'աշխատցնեն:

Շրջակայքին մէջ ապրող քրիստոնէաները իմանալով անոնց աշխատանքի վայրը, մեծ յարգանք կ'ընծայեն անոնց, որպէս կենդանի նահատակներ, եւ բազմաթիւ նուէրներ կը բերեն երկու քահանաներուն: Աբրահամ քահանան առնելով նուէրները երկար ճամբայ կտրելով կը տանէր զանոնք Յազկերտ պարսից թագաւորին կողմէ՝ նենգութեամբ բանտարկուած հայ նախարարներուն: Ի վերջոյ, ժամանակ մը ետք ներման կ'արժանանայ, եւ ի պատիւ իր կենդանի նահատակութեան, իրեն կը շնորհուի Բզնունեաց գաւառի եպիսկոպոսական աթոռը, ուր նաեւ խաղաղ մահուամբ կը վախճանի: Իսկ Խորեն քահանան կը նահատակուի, իր տաժանակիր աշխատանքին չդիմանալով:



Message du Prélat

ÉCOUTEZ-LE ET SUIVEZ-LE

L'Église arménienne Apostolique célèbre la Transfiguration de Jésus et conjonction avec une ancienne tradition arménienne païenne, la fête de Vartavar. Un jour, Jésus gravit une montagne avec ses disciples Pierre, Jacques et Jean et en leur présence, a été embrasé d'une lumière merveilleuse qui était la manifestation de Dieu sur terre. Les personnages du Vieux Testament Moïse et Élie apparaissent et confirment le message des anges. Jésus est en effet le fils de Dieu. Au même moment, la voix véritable et merveilleusement douce de Dieu fit entendre : « Celui-ci est mon Fils bien-aimé, en qui j'ai mis toute mon affection : écoutez-le ! » C'était la première fois qu'on entendit la voix douce de Dieu depuis la naissance de Jésus. Et voilà, c'était la deuxième fois que cette voix est entendue sur la voûte céleste du Mont Thabor, durant la dernière étape de la vie de Jésus pour confirmer et témoigner que Jésus est notre Sauveur, le Fils de Dieu qui est venu pour être avec nous et nous diriger. Le Christ est la lumière qui illumine tout homme, qui nous exonère de nos péchés et illumine la lumière dans nos cœurs et esprits.

Au sommet du Mont Thabor, Jésus a prié et soudain s'est Transfiguré. Il priait souvent et mettait l'accent sur l'importance de la prière. La prière doit devenir notre principe suprême à travers laquelle nous pouvons parler avec Dieu et Lui ouvrir notre esprit. Tous nos saints, nos martyrs et nos pontifes ont passé leurs vies en priant et ont réussi à voir la gloire de Dieu.

En conséquence, en établissant la prière comme un principe fondamental et il faut que nous le pratiquions sans faute et diligemment pour que nous soyons toujours en communication avec Dieu.

Jésus a vécu un moment de Transfiguration spirituel sur le mont Thabor et nous apprend que nous aussi avons besoin d'une illumination spirituelle pour que nous puissions parcourir un chemin éclairé pour devenir des enfants de la lumière.

Le monde aujourd'hui a besoin de la lumière divine du Mont Thabor pour briller et œuvrer. C'est cette lumière qui, à travers les siècles, a auréolé notre voûte céleste, nos cœurs et nos esprits. Je prie que cette lumière ne s'éteigne jamais de nos vies, de nos esprits et de nos cœurs.

Alors, réunissons-nous pour nous renouveler, transfigurer nos vies, illuminer nos parcours et ÉCOUTONS-LE ET SUIVONS LE...

Archevêque Papken Tcharian

Quels sont le sens et l'importance de la transfiguration?

Environ une semaine après que Jésus a clairement annoncé à ses disciples qu'il souffrirait, serait tué et ressusciterait (Luc 9.22), il a amené Pierre, Jacques et Jean sur une montagne pour prier. Pendant qu'il priait, son apparence a changé, a pris une forme glorieuse, et ses vêtements sont devenus d'un blanc éclatant. Moïse et Élie sont apparus et se sont entretenus avec lui de sa mort prochaine. Pierre, très effrayé et sans savoir ce qu'il disait, a proposé de dresser trois tentes, certainement en référence à la Fête des Tabernacles, au cours de laquelle les Israélites habitaient sous tente pendant 7 jours (Lévitique 23.34-42). Pierre exprimait le désir de rester à cet endroit. Puis, une nuée lumineuse les enveloppa et une voix fit entendre ces paroles : « Celui-ci est mon Fils bien-aimé, qui a toute mon approbation : écoutez-le ! » Quand la nuée s'est dissipée, Moïse et Élie avaient disparu et Jésus était seul avec ses disciples, toujours très effrayés. Il les a avertis de ne raconter à personne ce qu'ils avaient vu, jusqu'à sa résurrection. Les trois récits de ces événements se trouvent dans Matthieu 17.1-8, Marc 9.2-8 et Luc 9.28-36.

L'objectif de la transfiguration de Christ dans au moins une partie de sa gloire céleste était certainement de permettre au « cercle restreint » de ses disciples les plus proches de mieux le comprendre. Christ a radicalement changé d'apparence, afin que ses disciples puissent contempler sa gloire. Les disciples, qui ne le connaissaient jusqu'ici que sous sa forme humaine, ont pris davantage conscience de la divinité de Christ, même s'ils ne la comprenaient toujours pas parfaitement. Cela leur a apporté le réconfort dont ils avaient besoin après avoir appris la terrible nouvelle de sa mort prochaine.

Symboliquement, l'apparition de Moïse et d'Élie représente la Loi et les Prophètes. La voix de Dieu provenant du ciel qui dit : « Écoutez-le ! » montre clairement que la Loi et les Prophètes doivent à présent céder la place à Jésus, le chemin nouveau et vivant qui remplace l'ancien, l'accomplissement de la Loi et des innombrables prophéties de l'Ancien Testament. De plus, sa forme glorifiée leur révèle un aperçu de sa glorification à venir et de son intronisation comme Roi des rois et Seigneur des seigneurs.



Over 100 People Attend The North American Armenian Youth Seminar at Camp Iawah – A Great Success.

For the past 7 years since 2010, Armenian Prelacy of Canada's Armenian Religious Education Council organizes a weekend seminar with clergyman, organizing committee members and Youth and Young Adults. It has been very successful every year.

On June 9th-11th, 2017, at Camp Iawah north of Kingston, Ontario, Canada in Godfrey, over 100 people attended the seminar coming from Montreal, Toronto, Cambridge, California, New York, even all the way from the Bahamas. We enjoyed home cooked meals, also a barbecue by the shores of Wolfe Lake, overlooking the beautiful moon which made its presence after our barbecue, then we danced around the bon fire with Armenian music, made s'mores.

During our free time we had activities such as canoeing, basketball, soccer, enjoying the lake, and some of us during that time enjoyed a good conversation, connecting with others and we became a family. Then we all wished it was a longer gathering.

The purpose of this Armenian North American retreat is to strengthen our spiritual selves, to meet and make friends with other Armenians, to make a spiritual bond with God, and to enjoy a weekend of fellowship.

Clergyman conducted discussions both about religion and other topics. Sr. Pazan/ArchBishop Papken Tcharian, Hayr Keghart Kosbakian, Hayr Vartan Tashjian, Father Paul Guirgis, Dr. George Laylekian. Also Semaline Joukakelian who were also one of the presenters of a discussion.



Thank you to Zaven Joukakelian, Anie Aboyan, Sossie Aboyan, Nora Zorian, Maria Tchamitchian, Sarkis Kidanian, Arameh Ebrahmanian, Taline Krikorian, Mariam Arakelian, Dania Ohanian, and others who organized this beautiful weekend which we will never forget.

Many people hardly slept all weekend as we all wanted to spend as much time with each other as possible as we all know, weekends go very fast. Time is precious and we all wanted to be part of every single aspect of the weekend. I know we all if not most of us recovered when we got to our homes.

We look forward to future gatherings together to reunite with friends, to make new friends and most importantly get together with hearing Gods words, learning, and creating a strong bond with God, and to take what we learn to include it in our lives. God bless everyone and hope to see you at our next Armenian North American retreat/seminar.

Talin Orfali





ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վերանորոգումը՝ մանուկներու դաստիարակութեամբ

Սողոմոն Իմաստուն Հին կտակարանի Ժողովողի գիրքին մէջ ըսած է. «Ոչինչ նոր է արելին տակ», հաւանաբար ասիկա շիտակ է աշխարհի բնակչութեան 20 առ հարիւրին համար, որոնք տակաւին ելեկտրականութիւն չունին, սակայն մեզի համար, որ Հիւսիսային ամերիկայի մէջ կ'ապրինք, ամէն օր փոփոխութիւն կայ...:

Փոփոխութիւն:

Մենք, անձնապէս եւ հաւաքաբար մաս կը կազմենք այս փոփոխութիւններուն...: Կարելոր հարցումը այդ է, թէ մեր մասնակցութիւնը այս փոփոխութեան մէջ ենթակայական է թէ առարկայական:

Այսինքն, մե՞նք ենք, որ կը պարտադրենք այս փոփոխութիւնը, մե՞նք ենք, որ կը սկսինք փոփոխութիւնը, մե՞ր նպատակներուն համար, թէ փոփոխութիւնն է, որ կը պարտադրուի մեր վրայ, որովհետեւ սկսուած է ուրիշներու կողմէ, անո՞նց շահերուն համար:

Իւրաքանչիւր փոփոխութիւն մէկու մը «վերանորոգում»ն է, մէկու մը «update»ն է:

Քաղաքական կեանքին մէջ, ամէն նոր կառավարութիւն կու գայ նաեւ փոխելու, նորոգելու, վերանորոգելու նախորդին կողմէ սկսուած գործ մը, մասնանշելով անոնց թերութիւնները՝ ըստ իրենց:

Բջիջային հեռախօսի աշխարհին մէջ, ամէն մարդ բջիջային հեռախօս ունի: Անոր վրայ կրնանք դնել մեր ամբողջ պատարագն ու ժամերգութիւնները: Սակայն հազիւ մի քանի անգամ վերանորոգուած է այս «APP»ը: Ահագին խաղեր կան, որոնք կը վերանորոգուին շարունակաբար, որովհետեւ կ'ուզեն աւելի եւ աւելի գերել գործածողները... ուրե՛մս իրենց կողմէ պարտադրուած վերանորոգումը կրնայ պատուհաս եւ զսասակար ըլլալ ուրիշներու...

Թորոս Պապիկեան
(Շարունակելի 1)



Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին տարեկան

համագումարը՝ **Ետդարձ** թեմայով

Հովանաւորութեամբ Գերաշնորհ Ս. Բաբգէն Սրբ. Արք. Չարեանի եւ կազմակերպութեամբ Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին, 9-11 Յունիս 2017-ի շաբաթավերջին տեղի ունեցաւ երիտասարդական համախմբում, «IAWAH» բանակավայրին մէջ, Քինկսթըն:

Գանատայի զանազան շրջաններէն մօտաւորապէս 100 երիտասարդներ ժամանեցին բանակավայր. այս տարի, համախմբումին մասնակցեցան նաեւ ԱՄՆ Արեւելեան եւ Արեւմտեան թեմերէն երիտասարդներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակին հիմամբ, սոյն համագումարի թեման էր վերանորոգումը, իսկ նպատակը՝ հրաւիրել երիտասարդը ինքնաքննարկման եւ ուխտի վերանորոգման, առաջնորդելով զինք ետդարձի, այսինքն՝ որդեգրելու աստուածահաճոյ ճանապարհ մը: Այս իմաստով համագումարին ընթացքին արծարծուեցան հայ քրիստոնէայ երիտասարդը յուզող հարցեր, լուսարձակի տակ առնուեցան օգտաշատ նիւթեր, որպէսզի երիտասարդը Աստուծոյ խօսքերով զինուած աստուածահաճոյ կեանք մը ունենայ իր առօրեայ խուճապով լի կեանքին մէջ:

Համագումարին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ երեկոյեան՝ Առաջնորդ Սրբազան Հօր ողջոյնի խօսքով ու աղօթքով: Այնուհետեւ, ներկաները համախմբուեցան եւ ծանօթացան իրարու:


Համագումարի դաստիարակչական բաժինը սկիզբ առաւ Շաբաթ առաւօտեան, Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի «Արեւագալ»ի ժամերգութեամբ, որուն յաջորդեց «Մէնիկ» հոգեւոր մտամփոփման պահ մը. երիտասարդները առանձնացան բնութեան մէջ եւ խոկումի պահ մը ունեցան, կարդալով Կորնթացիներուն գրուած նամակի «Զգուշացման կերպեր» (Կորնթացիա 7:2-4) բաժինը: Նախաճաշէն անմիջապէս ետք տոբթ. Ճորձ Լէյլէկեան ներկայացուց Քրիստոսի լեբան քարոզի «Երանիները» (Մատթէոս 5:3-11), որուն յաջորդեց շարականի ուսուցում Հոգեշնորհ Ս. Վարդան Վրդ. Թաշճեանի ղեկավարութեամբ, ապա մոլութիւններու մասին դասախօսեց Արժանապատիւ Ս. Փօլ Քին. Կիրկիսը եւ առաւօտեան բաժինը աւարտին հասաւ Գերապատիւ Ս. Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէկեանի «Փորձութեանց Յաղթահարել» դասախօսութեամբ: Կէսօրէ ետք, Մեմալին Պէքարեանի եւ Թալին Պօղոսեանի նախաձեռնութեամբ եւ երիտասարդներու մասնակցութեամբ կատարուեցան ներկայացում մը, որ կ'ամփոփէր ետդարձի գաղափարը: Երեկոյեան երիտասարդները մասնակցեցան զանազան խաղերու:

Կիրակի առաւօտ տեղի ունեցաւ երիտասարդական Ս. Պատարագ, զոր մատուցեց Հոգեշնորհ Ս. Վարդան Վրդ. Թաշճեան: Սուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքին երիտասարդութեան պատգամը փոխանցեց Գերշ. Ս. Բաբգէն Արք. Չարեան:

Ամբողջ շաբաթավերջին, երիտասարդները առիթ ունեցան խորհրդածութեան պահեր ունենալու Առաջնորդ Սրբազան Հօր հետ: Համագումարի աւարտին երիտասարդներուն խանդավառութիւնը ապացոյց մըն էր, որ այս տարի եւս համախմբումը յաջողեցաւ արդիւնաւէտ հետք թողոյլ մասնակիցներուն մօտ, անգամ մը եւս փաստելով, որ Գանատայի Հայոց Թեմը, յանձինս Առաջնորդ Սրբազան Հօր եւ ժողովական ու պատկան մարմիններու, իւրայատուկ արժէք կու տայ երիտասարդութեան, զանոնք մղելով մասնակից դառնալու ազգային եւ եկեղեցական կեանքին:

Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին գալիք ծրագիրներուն կրնաք հետեւիլ ղիմատետրի AREC (Armenian Religious Education Council) էջէն:

Նորա Զօպոյեան





Ghadir

Ghadir Meat & Restaurant

Մեր յարգալի յաճախորդներուն կը տեղեկացնենք, թէ GHADIR մտաւաճառատունն ու ճաշարանը փոխադրուած է աւելի բնդարձակ եւ յարմարաւէտ կէտքուն մը՝ Խորագայն եւ լաւագայն ձևով ծառայելու մեր յաճախորդներուն:

Մեր ճաշարանէն ներս կը սպասարկուին միջին արեւելեան զանազան ճաշատեսակներ, օրինակ՝ մենէիշ, պանիրով պէտրէկ, հաւու եւ կովու միսով շաւրմա, հաւու եւ կովու միսով խորոված, մսաշոր, չի բօֆթ, լման հաւու խորոված, աւճուխ եւ այլ տեսակի սղանդերներ:

ՆՈՐ ՀԱՍՅԷ՝

1848 Lawrence Avenue East
Scarborough, Ontario M1R 2Y4

ՀԵՌԱԶԱՅՆ՝

(416) 750-7404 կամ (416) 750-7400





Ուրբաթ | Vendredi 11 août

Ouverture des portes à 19h Admission générale 45\$

Pour les réservations de table veuillez appeler:

ELO OHANIAN 514-979-9350

ROUPEN ASHKARIAN 514-887-6547

SANDRA & THE LATIN GROOVE

HAVANA NIGHT



**MARTIN
MKRTCHYAN**

The King Of Bling
MARCO
Mr Tam Tam

Շաբաթ | Samedi 12 août

Ouverture des portes à 17h Admission générale 20\$



SAKO TASHJIAN



the highway.

Կիրակի | Dimanche 13 août

Ouverture des portes à 13h Admission générale 10\$

W/E DJ

Chris 24

#shk2017

L'ENSEMBLE "ANI" DE HAMAZKAYIN
DE DANCE



JOËLLE

**4 à 12ans 10\$ par jour Arcades
et Gonflables accès illimité**



Merci à tous nos commanditaires



**Alarme
Trans-Canada**

NORLITHO
www.norlitho.com



**FIVE STAR
ELECTRIQUE
CINQ ÉTOILES**


ArchiLABO
Construction





ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Մոնթրեալի «Սանահին» մասնաճիւղը
կը ներկայացնէ:



SIRUSHO

Գանատայի մէջ առաջին մենահամերգ
մասնակցութեամբ՝ Համազգայինի
Անի զոյգ պարախումբերուն եւ Զնար երգչախումբին

Ուրբաթ 7 Յուլիս 2017, երեկոյեան ժամը 8-ին
Collège Laval, Théâtre Marcellin-Champagnat • 1275 Avenue du Collège A, Laval, Qc H7C 1W8

Տոմսեր՝ \$60, \$40, \$25 (16 տարեկան եւ վար)
Տոմսերու համար դիմել՝
Սիլվի Մերճանեան 514-773-9391
Վերա Բիգիրեան 514-333-7216 (երեկ. ժամը 9-էն ետք)



A.C.C. TORONTO

SUMMER FEST 2017

ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

JULY 7 | 8 | 9

Market Vendors
Raffle Prizes
Dance Performances
Carnival
Arcade Games
Petting Zoo
& More

ARMENCHIK
FRIDAY, JULY 7
ԳԻՐԱՅԻՆ 7 ԺՈՒՆԻՍ

HAROUT BEDROSSIAN
FRIDAY, JULY 7
ԳԻՐԱՅԻՆ 7 ԺՈՒՆԻՍ

MARTIN MKRTCHYAN
SATURDAY, JULY 8
ՇԱԲԱՏ 8 ԺՈՒՆԻՍ

JOSEPH KRIKORIAN
SATURDAY, JULY 8
ՇԱԲԱՏ 8 ԺՈՒՆԻՍ

ADISS HARMANDIAN
SUNDAY, JULY 9
ԿՐԻՍՏՈՍ 9 ԺՈՒՆԻՍ

SIRUSHO
SUNDAY, JULY 9
ԿՐԻՍՏՈՍ 9 ԺՈՒՆԻՍ

JOELLE
SUNDAY, JULY 9
ԿՐԻՍՏՈՍ 9 ԺՈՒՆԻՍ

LIQUID TRIO
SAT, JULY 8 & SUN, JULY 9
ՇԱԲ 8 ԺՈՒՆ ԵՎ ԿՐԻՍՏ 9 ԺՈՒՆ

ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Lara's
RESTAURANT

MAJOR PLATINUM FOOD SPONSOR

FRIDAY | \$25
7:30pm - 2:00am

SATURDAY | \$30
5:00pm - 2:00am
\$20 EARLY BIRD 5:00pm - 7:00pm
SATURDAY ENTRANCE FOR KIDS 12 & UNDER FREE
sponsored by KRO INSURANCE

SUNDAY | \$20
2:30pm - 1:00am
\$15 EARLY BIRD 2:30pm - 6:00pm

ARZ
line foods

PLATINUM SPONSOR

#summerfest2017

Manoir Gouin

Résidence pour
aînés autonomes
et semi-autonomes

Residence
Certifiée

À partir de **995\$** (par semaine)
Tous les repas, collations et supervision
médicale inclus
1½ à 4½

**Gicleurs automatiques
dans chaque appartement**

**Մենք հոս ուրախ ենք
Պրն. Իրեկեան**

**Պատրաստ ԵՐԻՆ Կ'ՈՒՆԵՆԱՅ
ՁԵՐ ՀԱՆՁԱՏԵԼԱՆ ՏՈՒՐԵՆ ԱՆԻՍ:**

Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

ARMENIAN HERITAGE CRUISE®

JANUARY 20-28, 2018 - 8 NIGHT CRUISE!

• St. Kitts • Antigua • Puerto Rico • Labadee

HAROUT PAMBOUKJIAN

SIBIL

AKH'TAMAR DANCE ENSEMBLE

INSIDE CABIN	\$1044
PROMENADE INSIDE	\$1094
OCEAN VIEW	\$1234
DELUXE BALCONY	\$1524
SUPERIOR BALCONY	\$1574
SUITES available upon request	

2nd or 4th add'l person 16 years old sharing same cabin \$790
On 16th 17 years old and younger \$430

ALL RATES include: port charges, taxes, insurance, gratuities, and all other charges.
This cruise is a 8-night cruise. All 8 nights are on the ship. There are no shore excursions included in the price.
The price is per person, double occupancy. Single occupancy is available for an additional charge.
The price is per person, double occupancy. Single occupancy is available for an additional charge.

Royal Caribbean INTERNATIONAL

TRAVEL GROUP INTERNATIONAL

For Reservations Contact:
Local 561-447-0750 • Toll Free 1-866-447-0750 Ext 108 or 102
125 SE Mizner Blvd., Suite 14, Boca Raton, FL 33432
AHC@travelgroupintl.com
Call Arpi Ashkarian (Canada) (519) 749-2672

1941-ի Յունիսի 22-ին սկիզբ առած Մեծ Հայրենական Պատերազմի ընթացքին զոհուեցան 200 հազար հայ զինուորներ

- Հայրենական մեծ պատերազմին մասնակցած է 500 հազար հայ, որոնցմէ 300 հազարը եղած է Խորհրդային Հայաստանէն, իսկ մնացեալ 200 հազարը՝ Խորհրդային Միութեան այլ հանրապետութիւններէ:

- 1939 թուականի տուեալներով հայերու թիւը Խորհրդային Միութեան մէջ մօտ 2 միլիոն էր, այսինքն՝ հայերու 25 տոկոսը մարտի դաշտին վրայ էր:

- 200 հազար հայ հերոսաբար ինկած է ռազմադաշտին վրայ:

1941 թուականի Յունիսի 22-ին Մեծ Հայրենական մտաւ հայերու տուները: Երեք հարիւր հազար հայ կռուելու գացին Հայաստանէն (1941 թուականին հանրապետութեան բնակչութիւնը մէկ միլիոն երեք հարիւր հազար էր), մնացած մարդիկ, որոնք տուներ ձգեցին հայրերը, մայրերը, երեխաները (ոմանք չորս տարիով, ոմանք ալ՝ ընդմիջտ) խորհրդային Միութեան այլ երկիրներէ էին: Չվերադարձան մօտ երկու հարիւր հազար հայ զինուոր, եւ եթէ տուներ մնացեր էին մեծ հեղաշրջանը եւ քոյրեր, այդ կը նշանակէր, որ ընտանիքը բախտաւոր է:

Մուտքի դուռն ու բարձրասիւսի սեւ շրջանակը. ահա այն երկու կէտերը, զորս գիշեր ու ցերեկ, անհանգստութեամբ եւ յոյսով կը դիտէին թիկունքին յայտնուած մարդիկ: Կը նայէին դրան, քանի որ ճակատէն նամակներ բերող նամակաբերը կը թակէր զայն (եռանկիւնաձեւ ծալուած էջեր՝ առանց նամականիշի եւ ծրարի), եւ ամբողջ օրը ձայնասփիւռը մտիկ կ'ընէին, քանի որ ռազմաճակատէն նորութիւններ կը հաղորդէր: Պատերազմի առաջին տարուան ընթացքին ձայնասփիւռը ոչ մէկ լաւ բան կը յայտնէր:

Ամենակարեւորը հայերուն համար այն էր, ինչ որ կը յայտնէին ձայնասփիւռի լրատուական յայտագիրները:

«Վեց հայկական հրաձգային զօրաբաժին ձեւաւորուել էր (76, 89, 309, 409, 408 եւ 261), որոնք կը գտնուէին Կովկասի նախալեռներէն մինչեւ Պերլին եւ Պաքստանի թերակղզի, բայց աւելի շատ աչքի կը զարնէր, կը յայտնէր ձայնասփիւռը, 89-րդ զօրաբաժինը, որուն «Թամանեան» անուանումը տրուած էր

Թամանի թերակղզիին ազատագրման պատճառով: Պերլին հասած ֆաշիստական Գերմանիոյ մայրաքաղաքի դրոշին մասնակցած զօրաբաժինի հրամանատարը զօրավար Նուէր Սաֆարեանն էր: Զօրաբաժինը իր հաշուին ունի աւելի քան ինը հազար սպանուած եւ տասնմէկ հազար գերեզմարուած հիթլերական:

Նուէր Սաֆարեանը, ի հարկէ, միակ հայ հրամանատարը չէր, որ զօրավարի կոչում ունէր, Անոնք մի քանի տասնեակ էին, իսկ խորհրդային Միութեան մարշալ, ռազմօդային մարշալ եւ Զրահատանկային զօրքերու մարշալ կոչումներուն արժանացան միայն Յովհաննէս Բաղդամեանը, Սերգէյ Սուդիկովն ու Համազասպ Բաբաջանեանը:

Բաղդամեանն ու Բաբաջանեանը՝ երկուսն ալ Արցախի Չարդարլու գիւղէն էին: Միայն այդ գիւղէն պատերազմի մեկնած է 1250 հոգի, անոնցմէ 12-ը զօրավար դարձած են, 57-ն՝ գնդապետ, իսկ 7 չարդարլուցի արժանացեր են խորհրդային Միութեան հերոսի կոչման: Ահա թէ ինչպիսի՝ գիւղ է: Ընդհանուր առմամբ, խորհրդային Միութեան հերոսի աստղին արժանացեր է 106 հայ, իսկ ծովային օդաչու Նելսոն Ստեփանեանը երկու անգամ արժանացեր է անոր:

Երեւանը, ի հարկէ, երբեք ճակատին մօտ քաղաք չէ եղած, բայց դիւրութեամբ կրնար ըլլալ: Եթէ խորհրդային բանակը պարտուէր, այդ պարտութիւնը հայերուն համար ազգային աղէտ կը դառնար. արդէն պատերազմի սկիզբը Թուրքիան՝ Գերմանիոյ ռազմական գործընկերը, Հայաստանի հետ սահմանին մինչեւ ակոսները զինուած վեց զօրաբաժին կը պահէր եւ յարմար առիթ կը



սպասէր ներխուժելու համար: Այս կողմէն սահմանը կը պաշտպանէր 1942 թուականին ձեւաւորուած 261-րդ հրաձգային զօրաբաժինը: Այստեղ հարկ է նշել, որ այն դարբնոց հանդիսացաւ ճակատներուն վրայ կռուող հայ ազգային զօրաբաժիններուն համար: Համընդհանուր ռազմական ուսման զօրամասերուն Հայաստանի մէջ պատրաստուեցան մօտ 85 հազար զինապարտ, որոնք, ռազմական գործին տիրապետելով, ձուլուեցան գործող բանակին շարքերուն: Հրաձգային զօրաբաժինին առաջին հրամանատարը գնդապետ Ներսէս Բալոյեանն էր:

Իսկ մինչ այդ, բարձրասիւսները կը փոխանցէին ոչ միայն նորութիւններ ճակատամարտէն, այլեւ աշխատանքային ճակատներէն. գանոնք անմիջապէս կը հոգային առաջնագիծ գտնուողներուն մայրերը, կիներն ու երեխաները:

Պատերազմի տարիներուն հայ զերծակները խորհրդային Բանակի մարտիկներուն համար կարեցին 136 հազար կտոր տաքցնող հագուստեղէն, ռազմական գործողութիւններու տարածք զրկուեցան 206 հազար կապոց նուէրներ, 45 բեռնասալ պարենամթերք, իսկ արքայիսկոպոս Գէորգ Չորեքճեանի հրամանով ստեղծուած է «Սասունցի Դաւիթ» հրասայլային շարասիւնը:

«Ճակատ ուղարկուած է «Տ-34» 43 հրասայլ,- յայտնած էր ձայնասփիւ-

ռը: Հրասայլային շարասիւնը մասնակցած է Ուքրանիոյ ռազմական գործողութիւններուն, որոնցմէ ետք, համալրուելով կրկին 22 ռազմական մեքենայով, մասնակցած է Մերձբալթիկայի ճակատին»:

Ձեռքերը ծալած նստած չէր նաեւ հայկական սփիւռքը: Մօտ 20 հազար հայ կը կռուէր Միացեալ Նահանգներու հետեւազօրքին, նաւատորմին եւ օդային ուժերուն մէջ: Անոնցմէ յատկապէս ակնառու էին հրամանատար Հայկ Շեքերեհանը, հազարապետ Զաւէն Նալպանտեանը, հարիւրապետ Ճորճ Ճասկալեանը, տեղապահ Չարլզ Առաքելեանը, գնդապետ Սեմ Զաքիոնն ու ձոն Սուդոյեանը, տասնապետ Ճեյմս Թոփալեանը, պահեստային Լիւսի Ստեփանեանը եւ այլք: Սակայն այդ մասին հայկական ձայնասփիւռը յաճախ չէր խօսեր: Եւ ահա եկաւ այն օրը, երբ ձայնասփիւռը հայերէնով յայտարարեց եւ ամբողջ օրը կրկնեց Հայրենական Մեծ պատերազմի զխաւոր հաղորդագրութիւնը. «Ցաղթանակ»: Իսկ յետոյ մարշալ Ժուկովը ըսաւ. «Ցաղիգմի նկատմամբ տարած մեր յաղթանակին ընթացքին հայերը՝ սկսած շարքայիններէն մինչեւ մարշալ, անմահացուցին իրենց անունները խիզախ մարտիկներու չնսեմացող փառքով»:

Սերգէյ Բաբումեան

 Chadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	 Gary Chahinian ABR., Broker of Record - Owner RE/MAX DIAMOND Realty Inc. W. torontohomes.ca E. gary@remaxdiamond.com 416-258-8892	 Noor Fine Food Gourmet Mediterranean Cuisine 1 High Meadow Place, Unit 9 Toronto, Ontario M9L 2Z5 Tel 416 745 3111 Fax 416 745 9337
 ANI Restaurant 905.761.6484 1450 Clark Ave. West, Thornhill ON L4J 7R5	 Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotm.com www.suttongroupadmiral.com	 hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S. andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
 Crown Pastries Fine Middle Eastern Pastries 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden) Toronto ON. M1R 2Z5 Tel 647.351.2015 www.crownpastriesbaklava.com	 I.D.A. Part of the (Royal) family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax: 416.449.2048	 ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

ՈՒՒՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Ամթիլիաս Փոխադրութիւնը

«ԲԱՐԵԲԱՍՏԻԿ ԹՈՒԱ-ԿԱՆ»ԷՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՂԷՏԸ

6

Այս աղէտալի ժամանակին մէջ, ինչպիսի՞ն էր Կիլիկիոյ վրայ Օսմանեան քաղաքականութիւնը, եւ ի՞նչ էր Հայ յեղափոխական կուսակցութիւններուն տեղն ու դերը այնտեղ։

Մինչեւ 1890, Օսմանեան քաղաքականութիւնը Կիլիկիոյ չէր նայած ու չէր նայեր իբրեւ անջատողական հեռանկարով պայքարի տարածք մը։ Կիլիկիան այդպիսին չէր եղած ու չէր։ Նոյնիսկ Զէյթունի խիզախութիւնները թէ՛ 18–րդ դարու առաջին կէսին (1808, 1819, 1829, 1835), եւ թէ՛ ալ 1862–ին՝ «հայ ազատագրական շարժման փայլուն դրուագներից» համարելը չեղում մըն է իրականութենէն, քանի որ անոնք միայն «առտնին կառավարուելու» կամ տեղական անկախութիւնը պահելու մաքառումներ եղան։ Օրմանեան արքեպիսկոպոսի համաձայն՝ Զէյթունի ինքնապաշտպանութիւնը իրեն նպատակ ունէր «ո՛չ յաղթութիւն եւ ո՛չ ապստամբութիւն եւ ո՛չ տիրապետութիւն (...) այլ միայնումիայն ապահովութիւն եւ հանդիստ վայելել Օսմանեան տէրութեան ձեռաց ներքեւ»⁴⁵⁷։

1890–1908 կառավարութիւնը լրտեսներով, ժանտարմաներով եւ ոստիկաններով ողողեց Կիլիկիան, անվերջ ձերբակալութիւններ, բանտարկութիւններ, բրտութիւններ, կախաղաններ, աքսոր, զօրակայաններու բազմացում, կալուածներու գրաւումներ, յարատեւ ճիգ՝ քայքայելու հայութեան նիւթական կարողութիւնները, հարստահարութիւններ, շարունակութիւն տաճիկ խուժանի գրգռման, կրօնափոխութեան ստիպումներ։

1894–96–ի ջարդե՞րը։

